



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՆՏԱԳԻՏՅՈՒՆ • ՓՈՐՁ • ԴԵՄՈԿՐԱՏԻԱ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2021 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Սիրելի՛ գործընկերներ և ուսանողներ,

Յուրաքանչյուր օրացուցային փարվա ավարտը հաշվետու ժամանակաշրջան է, երբ փորձում ենք հանրագումարի բերել անցնող փարվա ձեռքբերումներն ու թերացումները: Այդ գործընթացում ևս մեկ անգամ տեսանելի դարձնելով մեր հաջողությունները՝ մենք ավելի ինքնավստահ ենք կազմում ապագայի ծրագրերը, ավելի թիրախավորված ենք դարձնում մեր հետագա աշխատանքները: Ահա այդ ճանապարհով է գնում նաև Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը՝ յուրաքանչյուր փարի անկողմնակալ ու սթափ գնահատելով իր գործունեության ևս մեկ հատվածը:

2021 թվականն իսկապես նախանշված ծրագրերի իրագործման փարի էր: Բուհի համալրման ու թողարկման պատկերը կրկին հավաստեց, որ համալսարանը շարունակում է բարձր պահել իր վարկանիշը. տնտեսագիտական կրթություն ընտրող դիմորդների համար այն թիվ 1 համալսարանն է, իսկ մեր շրջանավարտներն աշխատանքի շուկայում պահպանում են կայուն ու մրցունակ դիրքեր:

Սույն թվականի հունիսի 19-ին ՀՊՏՀ-ն երկրորդ անգամ 4 փարով ստացավ ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ պետության կողմից բուհի մասնագիտական կրթության որակի ճանաչելիության ապացույց, «Ամբերդ» հետազոտական կենտրոնը շարունակում է գիտական արդյունքի ստեղծման իր որդեգրած անշեղ ուղին, միջազգայնացման հարթակում բուհի գործունեությունը նոր ու բարձր նշածողի է ձգտում: Մեր գործունեության արդյունավետ ուղղությունների շարքը շարունակելի է՝ գործատուների հետ համագործակցության սերտացում, հեղինակավոր ընկերությունների, նաև պետական կառույցների հետ տասնյակ հուշագրերի ստորագրում, կրթական ծրագրերի արդիականացում, վերապատրաստման դասընթացների ներդրում, մասնագիտական կողմնորոշման աշխատանքների աշխուժացում և այլն:

Անցնող փարում մեզ հաջողվեց ճկուն կերպով ապահովել կրթության անցանցառցանց ձևաչափերը՝ շարունակելով անխափան ու որակյալ կրթական գործընթաց կազմակերպել, ինչպես նաև իրագործել ՀՊՏՀ 2018-2022 թթ. զարգացման ռազմավարությամբ նախանշված գործողությունների ծրագիրը:

Այս ամենի հանգամանալից մանրամասները, փաստական վավերացումները, ինչպես նաև ՀՊՏՀ ուսումնագիտական և ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը սիրով ներկայացնում ենք ձեր ուշադրությանը: Հավելվածների բաժնում արտացոլվել են բուհի գործունեության բոլոր ոլորտների թվային տվյալները և բուհի բյուջեի ցուցանիշները:

Վստահ եմ՝ մեր համալսարանի արհեստավարժ մասնագետների, բանիմաց դասախոսների ու հրաշալի ուսանողների հետ մենք շարունակելու ենք ավելի ու ավելի ամրացնել տնտեսագիտական կրթության և մեր երկրի բարենորոգ ապագայի կերտման հիմքերը:

Հարգանքով՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ

ՀՊՏՀ ռեկտոր

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ I..... 4

Կրթական ծրագրերի որակի բարելավում

Հավաքարմագրում

Կրթական ծրագրեր

Ակադեմիական կազմ

Ուսանողներ

Դիմորդներ

Ենթակառուցվածքներ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ II 14

ՀՊՏՀ գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացում

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ III 18

Կիրառական հետազոտություններ-կրթություն ինտեգրման և կիրառական հետազոտություններ-տնտեսություն համագործակցության ապահովում

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ IV..... 21

Միջազգայնացման ընդլայնում

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ V..... 28

Ակադեմիական էթիկայի և սոցիալական պատասխանատվության սկզբունքների ներդրում

ԽՆԴԻՐՆԵՐ 31

ՀԱՎԵԼՎԱԾ..... 35

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ I

Կրթական ծրագրերի որակի բարելավում

Ըստ ՀՊՏՀ զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի «Կրթական ծրագրերի որակի բարելավում» ռազմավարական նպատակի՝ 2021 թ.-ի համար նախատեսվել էին հետևյալ գործողությունները.

- կրթական ծրագրերում ընտրովի մոդուլների 25% ծավալի ապահովում,
- կիրառական գիտելիք հաղորդող դասավանդման մեթոդների ներդրում՝ կրթական ծրագրի որոշակի մոդուլների առնվազն 30%-ում,
- կրթական ծրագրերում ներառված դասընթացների առնվազն 50%-ի դեպքում՝ տպագիր և էլեկտրոնային տարբերակով հայերեն գրականության նյութերով ապահովում,
- ընթերցասրահի նստատեղերի առնվազն 30%-ի ապահովում համացանցային հասանելիությամբ համակարգչային տեխնիկայով,
- լսարանային ֆոնդի առնվազն 30%-ի վերազինում պրոյեկտորներով,
- լսարանային ֆոնդի առնվազն 30%-ի վերազինում խելացի գրատախտակներով կամ նույն նպատակին ծառայող տեխնիկական միջոցներով,
- գործատուների հետ համատեղ իրականացվող կրթական ծրագրերի ընդունելության կազմակերպում,
- գործող կրթական ծրագրերի ընտրովի դասընթացների մասնագիտական կողմնորոշման գործառույթի փոխանցում ֆակուլտետներից ռեգիստրավարի ստորաբաժանմանը,
- Moodle համակարգով կրթության կազմակերպման և ուսումնառությանը նպաստող մեթոդական բազայի (էլեկտրոնային մեթոդական նյութեր, տեսադասախոսություններ, քեյսեր և այլն) ձևավորում գործող ՄԿԾ-ներում ներառված դասընթացների առնվազն 70%-ի համար,
- Moodle համակարգով հեռավար կրթության կազմակերպման և ուսումնառությանը նպաստող մեթոդական բազայի (էլեկտրոնային մեթոդական նյութեր, տեսադասախոսություններ, քեյսեր և այլն) ձևավորում առնվազն 6 ՄԿԾ-ների համար:

Հավաքարմագրում

Պետական հավատարմագրում ունենալը բարձրագույն ուսումնական հաստատության կայուն գործունեության և զարգացման երաշխիքներից մեկն է: ՀՊՏՀ-ն 2018 թ.

մայիսին դիմում-հայտ էր ներկայացրել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն»՝ հավատարմագրման կարգի համաձայն: Փորձագիտական խմբի առաջին այցից հետո, համավարակով պայմանավորված, գործընթացը դադարեցվել էր, ապա վերսկսվել 2021 թ.-ին: Արդյունքում, ՈԱԱԿ հավատարմագրման հանձնաժողովի՝ 2021 թ. հունիսի 19-ի նիստում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանին շնորհվել է ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 4 տարի ժամկետով:

Կրթական ծրագրեր

«Կրթական ծրագրերի որակի բարելավում» ռազմավարական նպատակին համահունչ՝ համալսարանում 2021 թ. իրականացվել է երկու բակալավրիական և 9 մագիստրոսական կրթական ծրագրերի վերանայում: Մասնավորապես, «Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն» հիմնադրամի հետ համատեղ և վերջինիս համաֆինանսավորմամբ, հիմնովին վերանայվել են «Ֆինանսներ» և «Տնտեսագիտություն» մասնագիտությունների բակալավրիական կրթական, ինչպես նաև «Բանկային գործունեության կազմակերպում», «Ապահովագրական գործ», «Հանրային ֆինանսներ», «Կորպորատիվ ֆինանսներ», «Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում», «Միջազգային տնտեսական հարաբերություններ», «Տնտեսագիտության տեսություն», «Տնտեսության պետական կարգավորում», «Մակրոտնտեսական վերլուծություն» մագիստրոսական ծրագրերը:

Հարկ է նշել, որ ծրագրերի մշակմանը, բացի ՀՊՏՀ անձնակազմի անդամներից, որպես արտաքին փորձագետներ ներգրավվել են նաև ՀՀ կենտրոնական բանկի, ինչպես նաև «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» և «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն» հիմնադրամների ներկայացուցիչները: Նշված 2 բակալավրիական և 9 մագիստրոսական կրթական ծրագրերին զուգահեռ, ՀՊՏՀ ամբիոնի վարիչների մասնակցությամբ վերանայվել են բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում դասավանդվող դասընթացների առարկայական ծրագրերը՝ դրանցում ապահովելով ընտրովի մոդուլների 25% ծավալ և կիրառական գիտելիք հաղորդող դասավանդման մեթոդների առկայություն, առաջարկելով առարկայական ծրագրերին համահունչ արդիական գրականություն, որը ձեռք է բերվել ՀՊՏՀ գրադարանի կողմից:

2021 թ. մշակվել է «Բիզնես վարչարարություն» մասնագիտության՝ 3 տարի տևողությամբ անգալեզու բակալավրիական կրթական ծրագիրը, որի նպատակը օտարերկրյա դիմորդների ներգրավումն է: Օտարերկրյա ուսանողների կրթության շարունակականության ապահովման համար մշակվել է նաև «Բիզնես վարչարարություն»

անգլալեզու մագիստրոսական կրթական ծրագիրը՝ 2 տարի տևողությամբ: Ծրագրերը ՀՀ ԿԳՄՍ նախարարության հաստատմանը կներկայացվեն «ՀՀ բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքի ընդունումից հետո:

Հարկ է նշել, որ ՀՊՏՀ-ում մշակման փուլում են կրկնակի դիպլոմ նախատեսող միջամբիոնային մագիստրոսական կրթական ծրագրերը.

- Internationalization through Advanced Digital Education in Asia and Caucasus-IDEA ծրագրի շրջանակներում Ցվիկաուի կիրառական գիտությունների համալսարանի (Zwickau University of Applied Science) հետ «Կառավարում և ինֆորմատիկա» (Management and Informatics) մասնագիտությամբ 2 տարի տևողությամբ մագիստրոսական կրթական ծրագիր, որն ընդգրկում է միջամբիոնային հետևյալ ուղղությունները. կառավարում, տեղեկատվական համակարգեր, մարքեթինգ, տվյալագիտություն և էկոնոմետրիկ մոդելավորում: Կրթական ծրագիրը մշակվում է 6 պետությունների (Գերմանիա, Հայաստան, Վրաստան, Ղազախստան, Ղրղզստանը և Չինաստան)՝ կոնսորցիումի անդամ համալսարանների կողմից և թույլ կտա ուսանողներին ուսումնառել տարբեր երկրների բուհերում՝ վճարելով ՀՊՏՀ-ում սահմանված ուսման վարձին համարժեք վարձավճար ու օգտվելով զանազան կրթաթոշակներից: Ծրագիրը նպատակ ունի ստեղծելու միասնական կրթական մոտեցումներ Գերմանիայի, Հարավային Կովկասի, Միջին Ասիայի և Չինաստանի բուհերի միջև: Այժմ մշակվում են կրթական ծրագրի մոդուլները, իսկ 2023 թ.-ին նախատեսվում է իրականացնել ուսանողների ընդունելության 1-ին փուլը:
- ՌԴ Կառավարությանն առընթեր ֆինանսական համալսարանի (Финансовый университет при Правительстве Российской Федерации) հետ համագործակցության շրջանակներում իրականացվում է «Տնտեսության քանակական մեթոդներ և տվյալների վերլուծություն» (Количественные методы и анализ данных в экономике) կրկնակի դիպլոմով մագիստրոսական կրթական ծրագիրը, որի ընդունելության առաջին փուլը նախատեսված է սկսել 2022 թ.-ին: ՀՀ-ում և ՌԴ-ում կազմակերպվող ընդունելության արդյունքներով ուսանողները մեկ կիսամյակ կսովորեն ՀՊՏՀ-ում և մեկ կիսամյակ էլ՝ ՖՀ-ում՝ ուսումնառության ընթացքում ձեռք բերելով միջմասնագիտական հմտություններ և գիտելիք կառավարման, վիճակագրության, գործարարության, էկոնոմետրիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում: Ուսման վճարը ՀՊՏՀ-ում սովորելու ընթացքում համադրելի կլինի մագիստրոսական կրթական ծրագրերի միջին վճարի չափին, իսկ ՖՀ-ում ՀՊՏՀ ուսանողներին կտրամադրվեն էական զեղչեր:

2021-2022 ուսումնական տարում բակալավրիական 11 ծրագրից կայացել է 10, իսկ մագիստրոսական 29 ծրագրից՝ 21 ծրագիր: 2021-2022 ուսումնական տարում մա-

գիստրատուրայի ընդունելության արդյունքներով ձևավորված 21 կրթական ծրագրերից 5-ն իրականացվում է ՀՀ աշխատաշուկայի գործատու և համալսարանի գործընկեր կազմակերպությունների, իսկ 1-ը՝ Վալենտինայի պոլիտեխնիկական համալսարանի և Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի հետ համատեղ:

Ակադեմիական կազմ

Որակյալ կադրերի ներգրավման նպատակով 2021 թ. մայիսի 4-ին ՀՊՏՀ-ում հայտարարվել է ակադեմիական կազմի համալրման մրցույթ՝ 19 ամբիոնի 106 թափուր հաստիքների համար: Մրցույթին մասնակցելու նպատակով դիմել է 194 հավակնորդ, որից 149 հոգին՝ ՀՊՏՀ աշխատակիցներ, 45-ը՝ այլ հաստատություններից: ՀՊՏՀ մրցութային հանձնաժողովը մերժել է ֆակուլտետային գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը ներկայացնել 8 հավակնորդի գործ՝ ակադեմիական կազմի ձևավորման կանոնակարգի 10-րդ և 12-րդ դրույթներին անհամապատասխանության հիմքով, 10 աշխատակից հետ է վերցրել մրցույթին մասնակցության իր դիմումը: Փակ գաղտնի քվեարկության արդյունքում 176 հավակնորդից ընտրվել է 93-ը, իսկ 13 հաստիք մնացել է թափուր:

ՀՊՏՀ-ն շարունակում է ուշադրության կենտրոնում պահել ակադեմիական կազմի վերապատրաստման խնդիրները: Այսպես՝ 2021 թ. դեկավար անձնակազմի 23 անդամ, այդ թվում՝ պրոռեկտորներ, դեպարտամենտի տնօրեններ, դեկաններ, ստորաբաժանման ղեկավարներ մասնակցել են «Նախագծերի կառավարման հիմունքների» գծով վերապատրաստմանը, որի նպատակը համալսարանում իրականացվող գործընթացների արդյունավետության բարձրացումն է, կառավարման ոլորտում ժամանակակից գործիքակազմի և մեթոդների կիրառումը՝ միտված տարբեր ստորաբաժանումների հիմնական կատարողական ցուցանիշների բարելավմանը:

2021 թ. ՀՊՏՀ-ում կազմակերպվել է գործարար անգլերենի վերապատրաստման դասընթաց, որին մասնակցել է ակադեմիական և ուսումնասօժանդակ կազմի մոտ 70 ներկայացուցիչ: 6 խմբով, ըստ իմացության 4 մակարդակի կազմակերպված այս դասընթացի նպատակն էր նպաստել համալսարանի միջազգայնացման գործընթացին, ակադեմիական կազմի՝ անգլերենով դասավանդման խրախուսմանը, գիտահետազոտական գործունեության զարգացմանը, այդ թվում՝ ազդեցության գործակից ունեցող միջազգային ամսագրերում գիտական հոդվածների տպագրությանը:

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանում մեկնարկել է գործարար անգլերենի գծով 2-րդ վերապատրաստման գործընթացը՝ անցկացնելով ավելի քան 60 աշխատակցի գիտելիքի ստուգում՝ ըստ համապատասխան թեստերի, ինչպես

նաև հնարավորություն ընձեռելով արդեն իսկ վերապատրաստված դասախոսներին և աշխատակիցներին կատարելագործելու և խորացնելու գործարար անգլերենի իրենց հմտությունները: Համալսարանի տարբեր ամբիոնների շուրջ 140 դասախոս հաշվետու ժամանակաշրջանում մասնակցել է դասավանդման մեթոդաբանության գծով վերապատրաստման՝ միտված մասնագիտական և մանկավարժական որակների շարունակական բարելավմանը:

Համալսարանում իրականացվել են նաև մասնագիտական վերապատրաստումներ, մասնավորապես՝ «Մարքեթինգ» ամբիոնի 18 դասախոս մասնակցել է մասնագիտական վերապատրաստման, որն անցկացրել է Metrica Group-ի համահիմնադիր և Chief Growth Hacket Արմեն Ավագ Ավագյանը:

Շարունակական կրթության բաժինը բոլոր վերապատրաստումների ավարտից հետո մասնակիցների շրջանում իրականացրել է անանուն հարցումներ, ինչը թույլ է տվել վերհանել վերապատրաստման արդյունավետությանն առնչվող խնդիրներ, գնահատել դասախոսների գոհունակության և բավարարվածության մակարդակը, ինչպես նաև որոշել դասընթացավարների հետ հետագայում համագործակցելու նպատակահարմարությունը:

Երրորդ տարին անընդմեջ համալսարանը դիրքավորվում է կրթական ծառայությունների նոր՝ վճարովի կարճաժամկետ դասընթացների կազմակերպման սեզմենտում, որոնց նպատակը ՀՊՏՀ բյուջեի եկամուտների բազմազանեցումն է և գործնական ոլորտում հաջողության հասած դասընթացավարների ներգրավմամբ աշխատաշուկայում առավել պահանջված հմտությունների և գիտելիքի փոխանցումը ներքին և արտաքին շահառուներին:

Մասնավորապես՝ հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է «Մարդկային ռեսուրսների կառավարման հիմունքներ» խորագրով երկու դասընթաց, որը վարել է հայաստանյան մի շարք կազմակերպություններում HR խորհրդատվություն իրականացրած մասնագետ, քուլչ, Basic Corporation կազմակերպության մարդկային ռեսուրսների կառավարման և կազմակերպական զարգացման բաժնի ղեկավար Նանե Զեյնալյանը:

Գործընկեր կառույցների հետ համագործակցությամբ, մասնավորապես՝ Հայաստանում «SAS Institute»-ի միակ և պաշտոնական ներկայացուցիչ «Դը Գուրուս» ընկերության հետ համատեղ, անցկացվել է նոր՝ SAS+Statistics դասընթացների շարք, որին ակտիվորեն մասնակցել են ինչպես ՀՊՏՀ ուսանողներ և շրջանավարտներ, այնպես էլ արտաքին շահառուներ:

Ազգային բժշկական պալատի հետ համագործակցության շրջանակներում կազմակերպվել է ՇՄԶ կրեդիտ շնորհող «Հոսպիտալ մենեջմենթի» 2 դասընթաց, որին

մասնակցել են հանրապետության առողջապահական տարբեր հաստատությունների տնօրեններ և ղեկավար կազմի անդամներ:

Ընդհանուր առմամբ, 2021 թ. ՀՊՏՀ 277 աշխատակից մասնակցել է վերապատրաստման դասընթացների:

Ընթացիկ տարում ամփոփվել են նաև 2020-2021 ուսումնական տարվա երկու կիսամյակի ուսանողական անանուն հարցումների արդյունքները: Հարցումներին մասնակցել է ուսանողության մոտ 43%-ը: Հաշվետու տարում ինչպես ՀՊՏՀ ակադեմիական կազմի, այնպես էլ դասավանդման որակից ուսանողների բավարարվածության գնահատումը 4 բալային սանդղակով կազմել է 3,64 միավոր: 2019 թ. այդ ցուցանիշը 3,46, իսկ 2017 թ.՝ 3,39 միավոր էր: Ընդ որում, այս ցուցանիշն աճել է և՛ դասընթացի գործնական բաղադրիչի մատուցման մեթոդների, և՛ տրամադրվող ուսումնական նյութերի որակի առումով:

Ուսանողներ

Ընթացիկ տարում ՀՊՏՀ առանցքային նպատակներից մեկն է եղել բուհ-աշխատաշուկա կապի ամրապնդումն ու շրջանավարտների հետ ակտիվ համագործակցության ուղիների ապահովումը: Այս առումով, Կարիերայի կենտրոնն իրականացրել է մի շարք միջոցառումներ: Մասնավորապես՝ կենտրոնի ֆեյսբուքյան էջում տեղադրվել, ինչպես նաև ՀՊՏՀ ուսանողների և շրջանավարտների տեղեկատվական շտեմարանի էլեկտրոնային հասցեներին են ուղարկվել համալսարանի գործընկեր կազմակերպություններում առկա ավելի քան 260 թափուր աշխատատեղերի մասին հայտարարություններ: Թափուր հաստիքների համար դիմել են 1200 ուսանող և շրջանավարտ (75%-ը՝ ՀՊՏՀ-ն ավարտած):

Գործընկեր կազմակերպությունների ներգրավվածությունը բուհի կյանքում ընդլայնելու համար Կարիերայի կենտրոնը կազմակերպել է 20 վարպետաց դասեր տարբեր կազմակերպությունների ղեկավարների և առաջատար մասնագետների մասնակցությամբ («Կոկա Կոլա ՀԲԲ Արմենիա», ՀՀ կենտրոնական բանկ, «PwC Armenia» ընկերություն, «Ակբա բանկ» ԲԲԸ և այլն): Ընդ որում, դրանք տեղի են ունեցել ինչպես համալսարանում, այնպես էլ գործընկեր կազմակերպություններում: Մասնակիցների թիվը 900-ից ավելի է:

Հաշվետու տարում, ՀՊՏՀ գործընկերների հետ համատեղ («Ինգո Արմենիա» ՓԲԸ, «ՍՏԱՄԻՆԱ» վաճառքի աուքտորսինգային ընկերություն և այլն), Կարիերայի կենտրոնն ուսանողների համար իրականացրել է նաև մի շարք դրամաշնորհային ծրագրեր և մրցույթներ: Բացի կրթական ծրագրերով հաստատված փորձառություն-

ներից, ուսանողների գործնական գիտելիքների ամրապնդման նպատակով կազմակերպվել է 17 մրցույթ՝ 432 ուսանողի մասնակցությամբ:

Համալրվել է աշխատանք փնտրող ՀՊՏՀ շրջանավարտների տեղեկատվական շտեմարանը, որտեղ ընթացիկ պահին առկա են տեղեկություններ 5500 շրջանավարտի վերաբերյալ, ինչը 153%-ով գերազանցում է նախորդ տարվա նույն ցուցանիշը: Բացի այդ, ձևավորվել են ևս երկու տեղեկատվական շտեմարաններ (ՀՊՏՀ ուսանողական խորհրդի հետ համատեղ) այն ուսանողների համար, որոնք ուզում են աշխատել և հետաքրքրված են կամավորական աշխատանքով: Ամենշաբաթյա պարբերականությամբ տեղեկատվական շտեմարաններում առկա էլեկտրոնային հասցեներին են ուղարկվում տեղեկություններ թափուր հաստիքների, մրցույթների, միջազգային ծրագրերի, փորձառության հնարավորությունների մասին: Միաժամանակ, Կարիերայի կենտրոնն անհատական և խմբային խորհրդատվություններ է կազմակերպում աշխատանք փնտրելու հմտությունների՝ մրցունակ CV կազմելու, հարցազրույցներին նախապատրաստվելու վերաբերյալ, որին հաշվետու տարում մասնակցել է 35 ուսանող:

ՀՊՏՀ ուսումնական ծրագրերով հաստատված ուսումնաարտադրական, գիտահետազոտական, հետազոտական և գիտամանկավարժական փորձառություններ են կազմակերպվել բակալավրիատի ու մագիստրատուրայի ուսանողների համար: Փորձառության վայրի ընտրության հարցում նախապատվությունը տրվել է բանկային համակարգում գործող ընկերություններին և պետական ապարատին: Այս առումով, ընթացիկ ժամանակահատվածում հետաքրքրություն են ներկայացրել «ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն (85 ուսանող), «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն (69 ուսանող), «Արդշինբանկ» ՓԲԸ-ն (52 ուսանող), «Տաշիր գրուպը» (38 ուսանող), «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ն (36 ուսանող), «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (28 ուսանող) և այլն:

Պետական հատվածում ՀՊՏՀ ուսանողները փորձառություն են անցել ՀՀ ֆինանսների նախարարությունում (72 ուսանող), ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում (69 ուսանող), ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում (51 ուսանող), ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեում (47 ուսանող), ՀՀ կենտրոնական բանկում (20 ուսանող) և այլն:

Կարիերայի կենտրոնը կրթական ծրագրերով նախատեսված փորձառության արդյունքների վերաբերյալ անցկացրել է հարցումներ, որոնց ամփոփ հաշվետվությունը ցույց է տալիս, որ 64% դեպքերում ուսանողին փորձառության վայր ուղղորդել է ՀՊՏՀ-ն, 25% դեպքերում փորձառության վայրը համընկել է ուսանողների ընթացիկ աշխատավայրի հետ, իսկ 11% դեպքերում փորձառության վայրի վերաբերյալ ուսանողները ձեռք են բերել պայմանավորվածություն: 15%-ը փորձառություն անցել է

ՀՊՏՀ գործընկերների կազմակերպած մրցութային փուլի հաղթահարման արդյունքում, իսկ համալսարանի կողմից ուղղորդված մյուս ուսանողները փորձառություն անցել են գործընկերներ կազմակերպություններում՝ առանց որևէ մրցութի մասնակցելու: Փորձառության արդյունքների գնահատման հարցաթերթում ուսանողների մեծ մասը, որպես կարևոր գործոններ, շեշտադրել է ձեռք բերված գործնական հմտությունները և ստացած մասնագիտական խորհրդատվությունը: Միաժամանակ, Կարիերայի կենտրոնը հստակեցրել է այն ուսանողների ցանկը, որոնք փորձառության վայրում ստացել են աշխատանքի առաջարկ կամ ձեռք են բերել պայմանավորվածություն հետագայում աշխատանքի տեղավորման վերաբերյալ:

Այսպիսով, ընդհանուր առմամբ, ընթացիկ տարում 435 կազմակերպությունում փորձառության է մասնակցել 1834 ուսանող: Փորձառության մասնակիցների մոտ 65%-ը բակալավրիատի առկա և հեռակա կրթաձևերի ուսանող է: Կարիերայի կենտրոնի կողմից փորձառությունների կազմակերպման փուլում հավաքագրված նախնական տեղեկությունների համաձայն՝ 2021-2022 ուսումնական տարում համալսարանի բակալավրիատի ուսանողների 37%-ն աշխատում է ըստ մասնագիտության, իսկ մագիստրատուրայի ուսանողների 75%-ը փորձառության փուլում արդեն իսկ ապահովված էր աշխատանքով:

ՀՊՏՀ ուսանողների մասնագիտական աճի ապահովման համար 2021 թ. հոկտեմբերի 8-ին համալսարանի բակում, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Միասնական սոցիալական ծառայության հետ համատեղ, կազմակերպվել է Աշխատանքի տոնավաճառ, որտեղ հայաստանյան առաջատար 55 կազմակերպություն ներկայացրել է առկա թափուր հաստիքները, ինչպես նաև իրականացրել մասնագիտական կադրերի համալրում: Աշխատանքի տոնավաճառի արդյունքների նախնական ամփոփման արդյունքում աշխատանք է գտել 30 մարդ:

ԵՄ աջակցությամբ ստեղծված ԻՐԻՍ բիզնես ինկուբատոր հիմնադրամի և ՀՊՏՀ-ի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր, որի նպատակն է տնտեսության և կրթության զարգացման գործում ներդնել համատեղ ներուժը և բիզնեսի զարգացման ծառայությունները հասանելի դարձնել երիտասարդ ձեռներեցներին: Բիզնեսի ոլորտում հայ երիտասարդների ներգրավվածությունը խթանող առաջին համատեղ ծրագրին դիմել է 40 ուսանող: Նրանք առաջին փուլում ստացել են մենթորինգի և քոչինգի ծառայություններ ՀՊՏՀ Change Lab-ի կողմից: Վերջնական ֆինանսավորման փուլ է անցել 3 մասնակից, որից երկուսը՝ ՀՊՏՀ-ից, մեկը՝ ուսանող և մյուսը՝ շրջանավարտ:

Հաշվետու տարում Իրիս բիզնես ինկուբատորը, Change Lab-ի հետ համատեղ, իրականացրել է ուսանողական մրցութթ՝ «Ստեղծի՛ր քո բիզնեսը»՝ գաղափարատոն-

2021: Ծրագրին դիմել է մոտ 70 ուսանող՝ տարբեր բուհերից, և հիմնական փուլում ընդգրկվել է 23-ը, վերջնական գաղափարի ֆինանսավորման հայտ ներկայացրել 12-ը՝ համախմբված 4 խմբում՝ «Քուիք Չարջ», «ՎԻԱՐ տուրիզմ», «Ազրո UAV» և «Լինգո»:

ՀՊՏՀ Change Lab-ի և շվեյցարական մարդասիրական «ԿԱԶԱ» հիմնադրամի միջև ստորագրված համագործակցության պայմանագրի շնորհիվ, «Հիրշման կրթաթոշակային ծրագրի» շրջանակներում, ՀՊՏՀ 8 ուսանող մեկ տարի ժամկետով արժանացել է կրթաթոշակի, որը նախատեսում է ուսման վարձավճարի 50-70% փոխհատուցում:

ՀՊՏՀ Change Lab-ը, «Smartology Digital Business Academy»-ի հետ համատեղ, իրականացրել է «Թվային աշխարհի խնդիրը լուծող SMM-2.0» եռամսյա դասընթացը, որտեղ, բացի ակադեմիական կրթություն ստանալուց, ուսանողները ներգրավվել են որպես փորձնակներ: Նրանց հնարավորություն է տրվել կիրառելու իրենց գիտելիքները մեդիա հարթակներում և անցնելու աշխատանքի: Մասնակցության հայտ ներկայացրած 203 ուսանողից փուլային քննությունների արդյունքում 80% դրական շեմ ապահոված 25-ը զբաղվել է 18 բիզնես էջի մարքեթինգային առաջխաղացմամբ, լուծել SMM ոլորտի խնդիրներ: 9 մասնակից արդեն ունի աշխատանք:

ՀՊՏՀ Change Lab-ը, «Smartology Digital Business Academy»-ի հետ համատեղ, մեկնարկել է կառավարչական հմտությունները զարգացնող դասընթաց («Complex Management»): Դասընթացի նպատակն է ձևավորել երիտասարդ մասնագետների, որոնց կարիերայի աճը պայմանավորված կլինի ոչ թե ներկայում գործող աստիճանային մեթոդով, այլ թռիչքային՝ հիմնված կարողությունների ու soft skill-ների վրա, ինչպես նաև տրամադրել գործիքակազմ սկսնակ գործարարներին՝ իրենց բիզնեսն արդյունավետ կերպով կառավարելու համար: Ծրագրին հայտ է ներկայացրել 278 մասնակից՝ տարբեր բուհերից: Ընտրության փուլն անցել է 142 դիմորդ:

2021 թ. ՀՊՏՀ ուսանողական խորհուրդը ՀՀ ԿԳՄՍ նախարարի հաստատմանն է ներկայացրել ««Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսանողական խորհրդի կանոնադրությունը», որը հաստատվել է նախարարի՝ 3.12.2021 թ. թիվ 2017-Ա/2 հրամանով:

Դիմորդներ

Կարևորելով համալսարան-դպրոց կապը՝ ՀՊՏՀ-ն հաշվետու տարում կազմակերպել է 7 «Բաց դռների օր»՝ ճանաչողական այց-հանդիպումներ ավագ դպրոցների և քոլեջների աշակերտների համար: Ավելի քան մեկ տասնյակ դպրոցների աշակերտներ հնարավորություն են ունեցել տեղեկանալու համալսարանի գործունեությանը, կառուցվածքին, բուհական կյանքին և ստանալու իրենց հուզող հարցերի պատասխանները: Հանդիպումներն ամփոփվել են համալսարանում շրջայցով, որի ընթացքում աշակերտները ծանոթացել են համալսարանի ենթակառուցվածքներին:

Նույն համատեքստում կազմակերպվել են նաև «Արի՛ ՀՊՏՀ» մարզային այցելություններ: Նախաձեռնության շրջանակներում շարունակական կրթության բաժնի և ուսանողական խորհրդի ներկայացուցիչները այցելություններ են կատարել հետևյալ դպրոցներ՝ Վաղարշապատի Գրիգոր Նարեկացու անվան թիվ 2 ավագ դպրոց, «Էօրնեկեան» հանրակրթական դպրոց, Աբովյանի թիվ 1, թիվ 4 և թիվ 6 ավագ դպրոցներ, Մասիսի թիվ 5 ավագ դպրոց և Արտաշատի ավագ դպրոց:

2021-2022 ուստարվան ընդառաջ՝ համալսարանը հանդես է եկել նոր նախաձեռնությամբ՝ կազմակերպելով տնտեսագիտական հանրապետական մրցույթ, որի նպատակն էր խրախուսել տնտեսագիտական կրթությունը: Մրցույթը կայացել է ս.թ. մարտի 19-ին, որին մասնակցել է 88 աշակերտ՝ ՀՀ տարբեր մարզերից: Մրցույթի շրջանակում աշակերտները գրել են էսսե՝ «Ինչո՞ւ պետք է դառնալ տնտեսագետ» վերնագրով: Մրցույթի արդյունքների ամփոփումը և մրցանակաբաշխությունը տեղի են ունեցել 2021 թ. ապրիլի 9-ին: Լավագույն 20 աշխատանքի հեղինակներն արժանացել են մրցանակների, ընդ որում, առաջին երեք տեղը զբաղեցրածները ստացել են հարյուր հազարական դրամ ՀՊՏՀ կրթաթոշակ:

2021 թ. ՀՊՏՀ-ն մասնակցել է «Կրթություն և կարիերա. EXPO 2021» 20-րդ հոբելյանական միջազգային մասնագիտացած ցուցահանդեսին: Եռօրյա ցուցահանդեսի շրջանակում տաղավարի այցելուներին տրամադրվել են համակողմանի տեղեկություններ բուհի մասին, մասնավորապես՝ ներկայացվել են կրթական ծրագրերը, վարձավճարների չափը, համալսարանական գիտակրթական միջավայրը, ձեռքբերումները, ընդունելության գործընթացի որոշ մանրամասներ:

2021-2022 ուսումնական տարում ՀՊՏՀ է ընդունվել 1855 ուսանող, որից 1457-ը՝ բակալավրիատ, իսկ 398-ը՝ մագիստրատուրա: Ընդ որում, բակալավրիատ ընդունված ուսանողների թիվը գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը 1.5%-ով:

Ենթակառուցվածքներ

Հաշվետու ժամանակաշրջանում էապես բարելավվել են բուհի ենթակառուցվածքները: Մասնավորապես՝ վերանորոգվել է 1322 մ² տարածք, այդ թվում՝ 7 լսարան և 14 աշխատասենյակ: Հիմնովին վերանորոգվել է մարզադահլիճը: Ձեռք են բերվել մոտ 40 նոր համակարգիչներ և 15 անուն այլ համակարգչային տեխնիկա: Ընթերցասրահի նստատեղերի 70%-ը հագեցվել է համացանցային հասանելիությամբ, ինչը 20%-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: ՀՊՏՀ գրադարանը համալրվել է 1356 անուն նոր գրականությամբ, թվայնացրել 41 գիրք, և հասանելիություն է ապահովվել յոթ անվճար ու մեկ վճարովի միջազգային էլեկտրոնային հարթակներից:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ II

ՀՊՏՀ գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացում

Ըստ ՀՊՏՀ զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի «ՀՊՏՀ գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացում» ռազմավարական նպատակի՝ 2021 թ.-ի համար նախատեսված էին հետևյալ գործողությունները.

- կառուցվածքային ստորաբաժանումների անձնակազմի հավելավճարների փոխկապակցում հիմնական կատարողական ցուցանիշների հաշվետվողականության արդյունքներին,
- ակադեմիական անձնակազմի հավելավճարների փոխկապակցում վարկանշավորման արդյունքներին:

Հաշվետու տարում ՀՊՏՀ գիտական խորհրդի հաստատմամբ կիրառության մեջ են դրվել համալսարանի գործունեության արդյունավետության բարձրացմանը միտված մի շարք կարգեր, մասնավորապես՝ ««Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման և ատեստավորման», ««Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի ակադեմիական կազմի ձևավորման» կանոնակարգերը, ««Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի ներքին կարգապահական կանոնները» և ««Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի աշխատողների խրախուսման կարգը»:

Հարկ է նշել, որ, ՀՊՏՀ ակադեմիական կազմի ձևավորման նոր կանոնակարգին համապատասխան, փոփոխության են ենթարկվել ակադեմիական կազմի պաշտոնները՝ դրանք սահմանելով չորս տարակարգում: Ըստ այդմ՝ հաստատվել են նաև ակադեմիական կազմի պաշտոնների նոր անձնագրեր, որոնց համապատասխան փոփոխվել են ակադեմիական կազմի հետ կնքվող աշխատանքային պայմանագրերը: Ելնելով ՀՊՏՀ զարգացման ռազմավարության առաջնահերթություններից՝ ակադեմիական կազմի ներկայացուցիչների համար, ի թիվս դասախոսությունների և սեմինար պարապմունքների վարման, որպես ընթացիկ գործառնության պարտականություններ են սահմանվել.

- հետազոտությունների իրականացումը՝ որոշակի պարբերականությամբ և դրանց հրապարակումը՝ արդյունքների տարածման ռազմավարական նպատակի համատեքստում,
- orchid.org, researchgate.net, academia.edu և Google Scholar հարթակներում գրանցվելն ու հրապարակված հետազոտությունները տվյալ հարթակներում զետեղելը՝ միջազգայնացման, օտարալեզու հետազոտությունների հրապարակման, բաց հարթակներում նույնականացման, ինչպես նաև ակադեմիական բարեվարքության մակարդակի բարձրացման համատեքստում,
- սահմանված չափորոշիչներին համապատասխան՝ moodle.asue.am հարթակում օգտահաշիվներ ձևավորելը և սպասարկելը՝ moodle հարթակը զարգացնելու, վերջինիս կիրառականության աճն ապահովելու և վերբեռնվող որակ մշտադիտարկելու համատեքստում:

2021-2022 ուսումնական տարում 282 ակադեմիական խմբերի համար moodle հարթակում ձևավորվել են 2199 ուսումնական մոդուլներ՝ ըստ ՀՊՏՀ-ի կողմից հաստատված դասացուցակների: Դրանցից 1165-ը ձևավորվել է առկա, 476-ը՝ հեռակա բակալավրիատի, 212-ը՝ առկա, 64-ը՝ հեռակա մագիստրատուրայի և 282-ը՝ Գյումրու մասնաճյուղի առկա և հեռակա կրթաձևերի բակալավրիատի և մագիստրատուրայի ակադեմիական խմբերի համար:

Համակարգում ներգրավված են առկա և հեռակա կրթաձևերի բոլոր կրթական ծրագրերի ակադեմիական խմբերի ուսանողներն ու դասավանդողները: Ընդհանուր առմամբ, moodle հարթակում մուտքի հնարավորություն է ապահովված համալսարանի 7328 ուսանողի, 98 ասպիրանտի, ակադեմիական 498 և վարչական անձնակազմի 92, ինչպես նաև Գյումրու մասնաճյուղի 378 ուսանողի և ակադեմիական ու վարչական անձնակազմի 83 ներկայացուցչի համար: 2020-2021 ուսումնական տարում moodle հարթակում դասընթացների մոդուլների ձևավորման դիզայնի, բովանդակության և վերբեռնված մասնագիտական գրականության աղբյուրների մշտադիտարկ-

ման արդյունքներով մշակվել և հաստատվել են համապատասխան կարգ և մեթոդական ուղեցույց, ըստ որոնց՝ համալսարանի ակադեմիական կազմը 2021-2022 ուսումնական տարվա համար ամբողջովին վերանայել է նախկինում ձևավորված դասընթացների մոդուլները: 2021 թ. նոյեմբերի 30-ի դրությամբ moodle հարթակում առկա 2199 դասընթացի մոդուլից 2158-ը (ընդհանուրի 98%-ը) ամբողջությամբ համապատասխանել է համալսարանի սահմանած պահանջներին՝ ինչպես ձևավորման դիզայնի, այնպես էլ վերբեռնված հայերեն և օտար լեզվով ուսումնառության նյութերի առումով: Փաստացի, moodle հարթակում ձևավորված դասընթացների 98%-ը ապահովված է օտար լեզվով ուսումնառության համար անհրաժեշտ ժամանակակից (ոչ ավելի, քան 3 տարվա հրատարակություն), ինչպես նաև դասընթացի կրեդիտից բխող ինքնուրույն ուսումնառության համար՝ հայերեն նյութերով: 2021 թ. սեպտեմբեր-նոյեմբերին ընդհանուր մուտքերի թիվը moodle հարթակ կազմել է 1025317:

Moodle հարթակում գործարկվել է նաև ընտրովի դասընթացների, փորձառության վայրերի, դասընթացից և դասավանդողների որակից ուսանողների բավարարվածության գնահատման, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ընտրության թվայնացված ռեգիստրար: Ներկայում ընտրովի դասընթացների ծրագրերը, մասնագիտական կողմնորոշմանը նպաստող այլ նյութեր, ներառյալ մի շարք ամբիոնների մշակած տեսանյութեր վերբեռնված են moodle հարթակի էլեկտրոնային ռեգիստրարում, ինչի արդյունքում 2021-2022 ուսումնական տարում մասնագիտական կողմնորոշման գործառույթն այլևս դեկանատները չեն իրականացնում: Վերջիններս պարզապես ստանում են ուսանողների էլեկտրոնային քվեարկության արդյունքները, ինչին համապատասխան, համալսարանում գործող կարգերի համաձայն, ձևավորում են ակադեմիական խմբեր:

2021-2022 ուսումնական տարում ՀՊՏՀ-ն լիարժեք կերպով կազմակերպել է ակադեմիական խմբերի ձևավորման, ամբիոնների ուսումնական ծավալների հաշվառման, դասաբաշխման, դասացուցակների կազմման, ուսանողների հաճախումների և ակտիվության հաշվառման, քննական տեղեկագրերի ստացման գործընթացներն էլեկտրոնային դեկանատի՝ ums.asue.am համակարգի միջոցով: Ums համակարգում ներկայում ներառված են համալսարանի 6471 ուսանողի (որից՝ առկա բակալավրի կրթական ծրագրով՝ 3206, հեռակա բակալավրի կրթական ծրագրով՝ 2196, առկա մագիստրոսի կրթական ծրագրով՝ 820 և հեռակա մագիստրոսի կրթական ծրագրով՝ 249) ամբողջական տվյալներ: Ums համակարգում դասացուցակների մոդուլի ձևավորումից հետո առաջացած 282 ակադեմիական խմբերի համար ավտոմատացված կերպով ստեղծվել են 2166 էլեկտրոնային մատյաններ և դրանց փոխկապակցված՝ քննական ամփոփաթեթեր (որոնցից՝ առկա ուսուցմամբ բակալավրիատում՝ 1351,

հեռակա ուսուցմամբ բակալավրիատում՝ 436, առկա ուսուցմամբ մագիստրատուրայում՝ 168 և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայում՝ 211 թվայնացված մատյան և ամփոփաթերթ): Սոս համակարգում գրանցված է ՀՊՏՀ և ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի ակադեմիական կազմի 688 և ուսումնասօժանդակ ու վարչական կազմերի 169 ներկայացուցիչ: Համակարգը հնարավորություն է ընձեռում վարելու և գեներացնելու ուսումնական գործընթացին, ուսանողների ուսումնառության արդյունքներին, հաճախումներին, ամփոփիչ ատեստավորմանը, միջին որակական գնահատականին (փաստացի, կիսամյակային, տարեկան և կուտակային), շարժունությանն առնչվող 23 առանձնացված վիճակագրական հաշվետվություններ, ինչը էապես դյուրացրել է իրական ժամանակի ռեժիմում համալսարանի կողմից կրթական գործընթացի վիճակագրության վարման և փաստերի վրա հիմնված որոշումների կայացման աշխատանքները:

Հաշվետու տարում հաստատվել են ՀՊՏՀ բոլոր ստորաբաժանումների կանոնադրությունները՝ նոր կառուցվածքին համապատասխան, հաստիքները և անձնակազմի պաշտոնների անձնագրերը: Միաժամանակ, փորձարկման փուլում է համալսարանի ռազմավարական նպատակներով սահմանված, հիմնական կատարողական ցուցանիշներին համապատասխան մշակված՝ աշխատողների գործունեության գնահատման և խրախուսման համակարգը:

ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված նվազագույն պահանջների համեմատ ՀՊՏՀ աշխատակիցներին սոցիալաշխատանքային լրացուցիչ երաշխիքներ տրամադրելու, ինչպես նաև նրանց իրավունքների ու շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորելու նպատակով 2021 թ. ՀՊՏՀ կոլեկտիվի ժողովը հաստատել է նաև «ՀՊՏՀ կոլեկտիվ պայմանագիրը» և «ՀՊՏՀ արհեստակցական միության կանոնադրությունը»:

ՀՊՏՀ-ում սովորող հաշմանդամություն ունեցող անձանց մտավոր կարողությունների, անհատականության, տաղանդի և ստեղծագործական մտքի զարգացման նպատակով հաստատվել է նաև «ՀՊՏՀ-ում սովորող հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման» կարգը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ III

Կիրառական հետազոտություններ-կրթություն ինտեգրման և կիրառական հետազոտություններ- տնտեսություն համագործակցության ապահովում

Ըստ ՀՊՏՀ զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի «Կիրառական հետազոտություններ-կրթություն ինտեգրման և կիրառական հետազոտություններ-տնտեսություն համագործակցության ապահովում» ռազմավարական նպատակի՝ 2021 թ.-ի համար նախատեսվել էին հետևյալ գործողությունները.

- բակալավրիատի ավարտական կուրսերի և մագիստրատուրայի ուսանողների 20% ներգրավվածության ապահովում համալսարանի հետազոտական կենտրոնների և ամբիոնների ընթացիկ հետազոտական աշխատանքներում,
- հետազոտությունների և մշակումների արտաքին ֆինանսավորման հանրային հիմնադրամի ձևավորում:

Հաշվետու տարում համալսարանում շարունակվել են գիտության և կիրառական հետազոտական գործունեության զարգացման ինստիտուցիոնալ և իրավական հիմքերի ձևավորման աշխատանքները, որոնք միտված են եղել գիտության զարգացմանն ու հետազոտական կարողությունների ամրապնդմանը:

Համալսարանական հետազոտությունների կառավարման ու Բաց գիտության կարողությունների զարգացման նպատակով MINERVA ծրագրի շրջանակներում մշակվել են «ՀՊՏՀ Բաց գիտության զարգացման ռազմավարություն-2022-2025» և «Բաց հասանելիության քաղաքականություն» (Open Access Policy) փաստաթղթերը, որոնք այժմ փորձագիտական եզրակացության փուլում են ծրագրի գործընկեր եվրոպական բուհերում և գործողության մեջ կդրվեն 2022 թ.-ին:

Հաշվետու տարում մշակվել և գիտական խորհրդի կողմից հաստատվել է «Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2021 թ. գործունեության ծրագիրը», որի շրջանակներում տվյալ ժամանակահատվածում «Ամբերդ» հետազոտական կենտրոնն ըստ արտաքին և ներքին շահառուների առաջարկությունների, դրամաշնորհային հիմունքով իրականացրել է 9 հետազոտական ծրագրեր, որոնց թեմատիկ ընտրությունը կատարվել է պետական կառավարման մարմինների հետ համագործակցության արդյունքում, վերջիններիս պատվերով՝ հաշվի առնելով համապատասխան ոլորտների պետական քաղաքականության մշակման համար գործնական հետաքրքրություն ներկայացնող ուղղությունները: Կենտրոնը 2021 թ.-ին իրականացրել է 7 հետազոտական ծրագրեր՝ հետևյալ գերատեսչությունների հետ համատեղ.

- ՀՀ էկոնոմիկայի նախարարություն,
- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,
- ՀՀ անվտանգության խորհուրդ,
- ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն,
- ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողով,
- ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայություն, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ:

Ներքին շահառուների մասնակցությամբ (ամբիոններ, մասնաճյուղեր) «Ամբերդ» կենտրոնն իրագործել է նաև 2 հետազոտական ծրագրեր, որոնցում ներգրավված են եղել 4 ուսանող և ասպիրանտ:

Հաշվետու ժամանակաշրջանում «Ամբերդ» հետազոտական կենտրոնը, որպես համակատարող, ընդգրկված է եղել «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանի կողմից համակարգվող ԵՏՀ «Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների՝ գործող միջազգային պայմանագրերում պարունակող՝ 2014 թ. մայիսի 29-ի Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի Հոդված 102-ի համաձայն միասնականացման մասին որոշումների կայացում պահանջող նորմերի որոշում և համեմատական վերլուծության իրականացում. Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների միջազգային առևտրային պայմանագրերի միասնականացման իրականացման կարգի մասին առաջարկությունների և այդպիսի միասնականացման տնտեսական հետևանքների հիմնավորումների մշակում, այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության միասնական շուկայի գործունեության պայմանների համար» թեմայով գիտահետազոտական աշխատանքներում:

2021 թ.-ին լույս է տեսել «Ամբերդ» գիտահանրամատչելի տեղեկագրի և «Բանբեր ՀՊՏՀ» գիտական հանդեսի 6-ական համար: «Ամբերդ» գիտահանրամատչելի տեղեկագրի 5-րդ համարը հրատարակվել է ռուսերեն, իսկ 6-րդ համարը՝ անգլերեն: «Բանբեր ՀՊՏՀ» գիտական հանդեսի 5-րդ և 6-րդ համարները լույս են տեսել անգլերեն: Ընդ որում, նույն ժամանակահատվածում «Բանբեր ՀՊՏՀ» գիտական հանդեսը ներառվել է Cyberleninka և eLIBRARY.RU էլեկտրոնային գիտական գրադարաններում: Գործնական քայլեր են կատարվում վերջինս ResearchGate համակարգում գրանցելու ուղղությամբ:

«Ամբերդ» կենտրոնում փորձաքննության են ենթարկվել և համապատասխան առաջարկությունների փաթեթներ մշակվել հետևյալ իրավական ակտերի վերաբերյալ.

- Սփյուռքի պարտատոմսերի թողարկման հայեցակարգ,

- «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- գնումների համակարգի շարունակական բարելավումների շրջանակում օրենսդրական փոփոխություններ,
- ՀՀ բարձրագույն կրթության երրորդ աստիճանի (ասպիրանտուրա) բարեփոխումների հայեցակարգ,
- 2022 թ. վիճակագրական ծրագրի նախագիծ,
- «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- «Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- «Բարեգործության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- ՀՀ տնտեսական քաղաքականության հայեցակարգ,
- Եկամուտների քաղաքականության վերափոխման համապարփակ (ոչ հատվածավորված) տեսլական:

«Ամբերդ» հետազոտական կենտրոնը նախաձեռնել է նաև տվյալների եռալեզու շտեմարանի էլեկտրոնային հարթակի ստեղծման աշխատանք:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ գիտության պետական կոմիտեի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» դրամաշնորհային ծրագրի շրջանակում ՀՊՏՀ-ում իրականացվել են 2 հետազոտական թեմաներ.

1. «Քաղաքական ինստիտուտները և տնտեսական զարգացման որակն ու գերակայությունները ՀՀ-ում»,
2. «Պետական փոխառու միջոցների ներգրավման միջոցով տնտեսական զարգացում ապահովելու հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում»:

2021 թ.-ին ՀՊՏՀ ակադեմիական անձնակազմի ջանքերով հրապարակվել են 26 մենագրություն, 26 ուսումնական ձեռնարկ, 6 թեզիս, 345 հոդված, որից 122-ը՝ ՀՀ ԲՈԿ-ի կողմից ընդունելի հայաստանյան ամսագրերում, 97-ը՝ միջազգային պարբերականներում, որոնցից 16-ը՝ ներառված Scopus կամ WoS շտեմարաններում: Ընդհանուր առմամբ, ազդեցության գործակից ունեցող ամսագրերում տպագրվել է ՀՊՏՀ-ականների 35 հոդված: Նախորդ ուսումնական տարվա համեմատ այս ցուցանիշն աճել է մոտ 66.7%-ով:

Նույն ժամանակաշրջանում ՀՊՏՀ աշխատակիցները պատրաստել և հրապարակել են 53 վերլուծական ակնարկներ ՀՀ տնտեսության և հանրային կյանքի առանցքային խնդիրների վերաբերյալ, մասնակցել ազգային և միջազգային 84 գիտաժողովի, 85 սեմինարի, 64 workshop-ի և 37 դրամաշնորհային ծրագրի:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ IV Միջազգայնացման ընդլայնում

Ըստ ՀՊՏՀ զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի «Միջազգայնացման ընդլայնում» ռազմավարական նպատակի՝ 2021 թ.-ին նախատեսվել էր իրականացնել արտերկրի կրթական հաստատությունների հետ համատեղ և կրկնակի որակավորում շնորհող նոր մագիստրոսական կրթական ծրագրերում ընդունելության կազմակերպում:

Հաշվետու տարվա ընթացքում արտաքին կապերի ընդլայնման նպատակով ՀՊՏՀ-ն կնքել է մոտ 110 համագործակցության հուշագրեր, որոնցից 28-ը՝ արտասահմանյան բուհերի հետ: Ըստ այդմ՝ համաձայնություն է ձեռք բերվել իրականացնե-

լու ուսանողների, դասախոսների և հետազոտողների փոխանակման, ինչպես նաև կրթական և հետազոտական համատեղ ծրագրեր, կազմակերպելու միջազգային սեմինարներ, գիտաժողովներ և դասընթացներ ու համատեղ դիմելու տարբեր դրամաշնորհային նախագծերի:

Նույն ժամանակահատվածում համալսարանը համագործակցության 7 պայմանագիր է կնքել կրթական և գիտական միջազգային կազմակերպությունների հետ, անդամակցել Սև ծովի և Արևելյան միջերկրածովյան ակադեմիական ցանցին և Գիտական հրապարակումներին աջակցման ասոցիացիային:

Անդամակցության հայտ է ներկայացվել Անկախ պետությունների համագործակցության ցանցային համալսարանական կոնսորցիումին: Հայտը բավարարվելու պարագայում անդամ բուհերի հետ նախատեսվում է իրականացնել մագիստրոսական համատեղ ծրագրեր և գիտական հետազոտություններ: Այդ ուղղությամբ ԱՊՀ ՑՀ անդամ որոշ բուհերի հետ արդեն իսկ ընթանում են բանակցություններ: Նույն կերպ, անդամակցության հայտ է ներկայացվել ՄԱԿ-ի Կայուն զարգացման լուծումների ցանցին: ԿԶԼՑ-ին անդամակցելով՝ ՀՊՏՀ-ն կդառնա կայուն զարգացման շուրջ գլոբալ քննարկումների, տարածաշրջանային, ազգային և միջազգային խնդիրների լուծմանն ուղղված կրթական նախաձեռնությունների մասնակից և հնարավորություն կունենա իր ներուժը ներդնելու ոլորտի կիրառական հետազոտությունների իրականացման գործում:

Միջազգայնացման գլխավոր նպատակներից մեկը ուսանողների և դասախոսների շարժունության ընդլայնումն է: Հաշվետու տարում ուսանողների, դասախոսների և վարչական աշխատակիցների փոխանակումն առավելապես կատարվել է Եվրոպական միության «Էրազմուս+» ծրագրի հիմնական գործողություն 1-ի շրջանակում, որին մասնակցել են 6 դասախոս, 5 վարչական աշխատակիցներ և 9 ուսանող: Միաժամանակ, ՀՊՏՀ-ն հյուրընկալել է գործընկեր բուհերի 4 ներկայացուցչի: 2021-2022 ուսումնական տարվա աշնանային կիսամյակում մրցութային կարգով արդեն իսկ ընտրվել են ՀՊՏՀ 20 ուսանող և ակադեմիական և վարչական անձնակազմի 15 ներկայացուցիչ, որոնք 2022 թ.-ին կմեկնեն ուսումնառելու և վերապատրաստվելու ՀՊՏՀ գործընկեր բուհերում:

Միջազգային կապերի բաժինը նույն ժամանակահատվածում ստեղծել է «Էրազմուս+» ծրագրում ներգրավված ԵՄ անդամ պետությունների բոլոր ուսումնական հաստատությունների (շուրջ 5000 բուհ) տվյալների բազան՝ վերջիններիս հետ կապ հաստատելու և համագործակցության առաջարկներ ներկայացնելու համար:

ՀՊՏՀ-ն ակտիվորեն համագործակցում է ԱՊՀ տարածաշրջանի մի շարք համալսարանների հետ: Ուսանողների փոխանակման ծրագրեր են իրականացվում Ուրալի

պետական տնտեսագիտական համալսարանի հետ, որտեղ հաշվետու տարում փոխանակման ծրագրով ուսումնառել է ՀՊՏՀ 3 ուսանող: Մրցութային կարգով ևս 2 ուսանող ընտրվել է ՌԻՊՏՀ-ում ուսումնառելու համար: Համաձայնություն է ձեռք բերվել Մոլդովայի տեխնիկական համալսարանի (Մոլդովա), Վադիմ Հեթմանի անվան Կիևի ազգային տնտեսագիտական համալսարանի (Ուկրաինա) և Հյուսիսկովկասյան դաշնային համալսարանների (ՌԴ) հետ՝ մոտ ապագայում իրականացնելու ուսանողների և անձնակազմի փոխանակման ծրագրեր:

ՀՊՏՀ-ի և ՌԴ «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանի միջև համագործակցության շրջանակներում ՀՊՏՀ 5 ուսանող 2021 թ.-ին հնարավորություն ունեցավ մասնակցելու վերջինիս կազմակերպած առցանց փորձառությանը, որի արդյունքում վերջիններիս շնորհիվեցին մասնակցության վկայականներ:

2021 թ. դեկտեմբերի 8-11-ը Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաքում տեղի ունեցավ հայ-ռուսական 7-րդ երիտասարդական համաժողովը, որին մասնակցեց ՀՊՏՀ 4 ուսանող:

Միաժամանակ, 2021 թ.-ի ընթացքում ՀՊՏՀ-ն հյուրընկալել է ՌԴ «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանի ներկայացուցիչներին, գերմանական «Կոպեռնիկոս Բեռլին» ասոցիացիայի տնօրեն Դավիթ Բուդաղյանին, «ԷՍ ՓԻ Զայն» գլոբալ կառավարման դպրոցի Դուբայի մասնաճյուղի տնօրեն Քրիստոֆեր Աբրահամին, Ռուսաստանի ժողովուրդների բարեկամության համալսարանի միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Լարիսա Եֆրեմովային, Ուկրաինայի կենսառեսուրսների և բնօգտագործման ազգային համալսարանի դասախոս Լեսյա Վոլյակին, Լատվիայի երիտասարդական զարգացման կենտրոնի տնօրեն Ալեքսանդր Փոստին, Նիդերլանդական ՀԱՆ կիրառական գիտությունների համալսարանի ներկայացուցիչ Ռենե Դոնդերսին, «Կայուն Եվրոպա» կազմակերպության տնօրեն Ալեքսանդր Ստոմելսին և նույն կազմակերպության համահիմնադիր Ռամոն Ռահանգմետային, DAAD-ի ներկայացուցիչներին, Elsevier-ի տարածաշրջանային տնօրեն Սերգեյ Ռեյակինին և նույն կազմակերպության ներկայացուցիչ Ք. Շիմանսկիին:

Elsevier-ի հետ համագործակցության շրջանակներում ՀՊՏՀ դասախոսների և հետազոտողների համար կազմակերպվել են շուրջ 20 վեբինարներ, որոնց ավարտին մասնակիցներին շնորհվել են համապատասխան սերտիֆիկատներ:

ՀՊՏՀ ուսանողների համար դասախոսությամբ հանդես է եկել ՀՀ-ում Նիդերլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Նիկո Սխերմերսը, որի համատեքստում հայտարարվել է «Հայ-նիդերլանդական գործարար հարաբերություն-

ների ընդլայնման հնարավորությունները» թեմայով էսսեների մրցույթ: Մրցույթի հաղթող ՀՊՏՀ ուսանողը հնարավորություն է ստացել գործնական միջավայրում մեկ օր անցկացնելու Նիդերլանդների դեսպան Նիկո Սխերմերսի հետ:

Նույն ժամանակահատվածում համալսարանում դասախոսություններով հանդես են եկել աշխարհահռչակ բանախոս Լարս Քոլինդը, Ուկրաինայի Վադիմ Հեթմանի անվան Կիևի ազգային տնտեսագիտական համալսարանի դասախոս, ՄԱԿ-ի փորձագետ Եկատերինա Իլիկչիևան, «Bildung Nijmegen» կրթության և նորարարության զարգացման նիդերլանդական կազմակերպության տնօրեն Ռենե Դոնդերսը, Կոմրատի պետական համալսարանի (Մոլդովա) դոցենտ Ռուսլան Բատիշևը: Վերջիններիս հետ կապը շարունակական բնույթ է կրում, և նախատեսվում են նմանատիպ այցելություններ և դասախոսություններ, ինչպես նաև տարաբնույթ միջոցառումների իրականացում:

Համավարակով պայմանավորված՝ մի շարք սեմինարներ և դասընթացներ անցկացվել են առցանց ձևաչափով, որոնց մասնակցել են ՀՊՏՀ բազմաթիվ աշխատակիցներ և ուսանողներ:

ԱՄՆ-ի կառավարության Ֆուլբրայթ փոխանակման ծրագրի շրջանակում համալսարանում առաջիկա ամիսներին անգլերեն կդասավանդի ծրագրի կրթաթոշակակիր, կրթության փորձագետ Լայլա Բոյաջյանը:

Հաշվետու տարում հաջողությամբ ավարտվել է «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում իրականացվող Educational for Drone («Անօդաչու թռչող սարքերի կրթական ծրագրի մշակում») նախագիծը, և ներկայացվել ամփոփիչ հաշվետվություն, որի գնահատականը կտրվի առաջիկայում:

2021 թ.-ին ՀՊՏՀ-ն ստացել է նախորդ տարի ավարտված REFINE («Ֆինանսների մագիստրոսական ծրագրերի բարեփոխում Հայաստանում և Մոլդովայում») նախագծի ամփոփիչ հաշվետվության գնահատման արդյունքները, ըստ որոնց՝ նախագծին շնորհվել է ամենաբարձր գնահատականը («շատ լավ»), ինչը նշանակում է, որ այն իրականացվել է հաջողությամբ, սահմանված ընթացակարգերի համաձայն: Նախագծի ավարտից հետո մի շարք միջոցառումների միջոցով ապահովվել է նաև դրա շարունակականությունը:

Հաշվետու տարում ՀՊՏՀ-ն հաջողությամբ իրականացրել է «ԵՄ և ԵԱՏՄ. հակամարտության և մրցակցության միջև, մերձեցում և համագործակցություն» EUCON նախագիծը՝ Էրազմուս+ «Ժան Մոնե ներվորքի» շրջանակում: ՀՊՏՀ ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետի մագիստրատուրայի ուսանողների համար արդեն իսկ դասավանդվում է «ԵՄ և ԵԱՏՄ անատոմիան. Հայաստանի ընտրությունը» առարկան: Նախագծի շրջանակում ՀՊՏՀ ուսանողների համար դասախոսությամբ հանդես են եկել ՀՀ ԱԳՆ

ներկայացուցիչ, տեղացի և արտասահմանյան դասախոսներ, կազմակերպվել է կլոր-սեղան քննարկում Հայաստան-ԵՄ հարաբերությունների թեմայով, որին մասնակցել են պետական գերատեսչությունների, ԵՄ պատվիրակության և գիտահետազոտական կառույցների ներկայացուցիչներ:

Հաշվետու տարում Վիշեգրադի միջազգային հիմնադրամի ֆինանսավորմամբ ՀՊՏՀ-ում իրականացվել է «Վիշեգրադյան քառյակի փորձի յուրացումը գիտելիքի և տեխնոլոգիաների փոխադրման բնագավառում» նախագծով նախատեսված գործողությունների մեծ մասը: Նախագծի նպատակն է գիտական հետազոտությունների առևտրայնացումը և ձեռնարկություն-գիտահետազոտական ենթակառուցվածք համագործակցության մշակույթի խթանումը Հայաստանում և Վրաստանում: Նույն համատեքստում տեղի է ունեցել գիտելիքի և տեխնոլոգիաների փոխանցմանը նվիրված երկօրյա միջազգային աշխատաժողով, որի ընթացքում թիրախային 2 խումբ՝ հետազոտական կենտրոններ և ՓՄՁ-ներ, ծանոթացել է գիտելիքի առևտրայնացման եվրոպական փորձին, ինստիտուտների ու ակադեմիական կառույցների հետ համագործակցության և շուկայում առավել մրցունակ դիրք զբաղեցնելու հեռանկարներին:

ՀՊՏՀ-ի և Թբիլիսիի պետական համալսարանի կողմից կազմակերպվել է նաև «Բիզնես-գիտություն» կապի խթանմանն ուղղված միջազգային մրցույթ, որին մասնակցել են փոքր և միջին ձեռնարկություններ Հայաստանից և Վրաստանից: Միջազգային մրցույթի նպատակը հետազոտական ենթակառուցվածքի ներկայացուցիչների հետ ձեռնարկությունների համագործակցության տեսլականի մշակումն էր, որը կծառայի որպես գործիք՝ նրանց միջև կապի ստեղծման և ամրապնդման համար: Դա, իր հերթին, ՓՄՁ-ներին հնարավորություն կընձեռի ապահովելու կայուն զարգացում և առաջխաղացում, իսկ հետազոտական ընկերություններին առևտրայնացնելու իրենց հետազոտությունները:

Հյուսիսկովկասյան դաշնային համալսարանի և ԱՊՀ անդամ պետություններից մի շարք գործընկերների հետ համատեղ հայտ է ներկայացվել մասնակցելու «Տնտեսական զարգացմանն ուղղված նպատակային աջակցության ճկուն մեխանիզմների մշակում» թեմայով բաց մրցույթին, որն իրականացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից: Հաղթող կողմը հնարավորություն կունենա իրականացնելու գիտահետազոտական աշխատանքներ, որոնք կկիրառվեն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից:

ՀՊՏՀ-ի կողմից ներկայացված՝ «Լեռնահանքային արդյունաբերության գործունեության ազդեցության գնահատումը ազդակիր (շրջակա) համայնքների բնակչության առողջության վրա» մոդելային օրենքի հայտը հաղթող է ճանաչվել ԱՊՀ երկրների միջխորհրդարանական վեհաժողովի գյուղատնտեսության և բնապահպա-

նության հարցերի մշտական հանձնաժողովում: Վերջին 30 տարվա ընթացքում Հայաստանում երբևէ մոդելային օրենք չի մշակվել ԱՊՀ երկրների համար: ՀՊՏՀ-ն առաջինն էր, որ նախաձեռնեց և հաղթանակած դուրս եկավ: Աշխատանքային խումբը ղեկավարում է պրոֆեսոր Միքայել Մելքումյանը:

Հաշվետու տարում ՀՊՏՀ-ն արդյունավետ կերպով համագործակցել է գերմանական «Կոպեռնիկոս Բեռլին» ասոցիացիայի հետ: ՀՊՏՀ ուսանողը հնարավորություն է ստացել ուսումնառելու Հումբոլտի համալսարանում (Գերմանիա)՝ ըստ «Կոպեռնիկոս Բեռլինի» տրամադրած գերազանցության միջազգային կրթաթոշակային ծրագրի (IES): 2021 թ.-ի ընթացքում ՀՊՏՀ-ն հյուրընկալել է 5 միջազգային սեմինարներ («Կանայք բիզնեսում», «Ձեռնարկատիրության հզորացումը երիտասարդների համար», «Մտածիր հրապարակելուց առաջ», «Աշխատելու հնարավորությունները» և «Փոխել մարդուն, ոչ թե կլիման»), որոնց մասնակցելու համար 12 երկրից ՀՊՏՀ է ժամանել 170 երիտասարդ: Սեմինարներին մասնակցել է նաև ՀՊՏՀ 21 ուսանող՝ ընտրված մրցութային կարգով: Միջազգային սեմինարները միջազգային հյուրերին և ՀՊՏՀ ուսանողներին հնարավորություն են ընձեռել ծանոթանալու արդիական և կարևոր հիմնահարցերի և ընդլայնելու իրենց մտափոխումները: «Կոպեռնիկոս Բեռլինի» հետ համագործակցության շրջանակներում ՀՊՏՀ 2 ուսանող հնարավորություն է ունեցել մասնակցելու Բեռլինում կայացած 2 միջազգային սեմինարների: Նմանատիպ նախաձեռնություններն ու միջոցառումները կրելու են շարունակական բնույթ:

Կարևորելով բուհի միջազգային վարկանշավորման հարցը՝ հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքներ են կատարվել նաև այս ուղղությամբ:

2020 թ.-ին առաջին անգամ ՀՊՏՀ-ն վարկանշավորվել էր Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի (EECA) բուհերի «QS World University Rankings 2021» վարկանշում: Աշխատանքները շարունակվել են նաև հաշվետու տարում՝ բարելավելով նախորդ տարի գրանցած արդյունքները: Համաձայն վարկանշավորման արդյունքների՝ 450 բուհից բաղկացած աղյուսակում ՀՊՏՀ-ն «251-300»-ից անցում է կատարել «241-250» հորիզոնական:

2021 թ., նույնպես առաջին անգամ, համալսարանը տեղ զբաղեցրեց համաշխարհային բուհերը վարկանշավորող Times impact Ranking-ում՝ լինելով հայաստանյան միակ բուհն այս հեղինակավոր հարթակում: THE TIMES Impact Ranking-ը համաշխարհային եզակի վարկանշավորման համակարգ է, որտեղ աշխարհի բոլոր համալսարանները գնահատվում են ըստ ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներին համապատասխանության սկզբունքի: Աղյուսակում ընդգրկվել է 94 երկրի 1115 համալսարան: Հաշվետու տարում կրկին մուտքագրվել է ՀՊՏՀ գործունեությանն առնչվող տեղեկատվություն: Վարկանշավորման արդյունքները պարզ կլինեն 2022 թ. ապրիլին:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՊՏՀ-ն ընդլայնեց միջազգային վարկանշավորման կազմակերպությունների հետ համագործակցությունը՝ ձգտելով վարկանշավորվել հեղինակավոր Round University Ranking-ում (RUR): 2022 թ. ՀՊՏՀ տվյալները կմուտքագրվեն RUR վարկանշավորման համակարգում՝ միջազգային վարկանշավորման գործընթացին մասնակցելու նպատակով:

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունը չորրորդ տարին անընդմեջ տեղ է գտնում Փենսիլվանիայի համալսարանի կողմից հրապարակվող՝ ուղեղային կենտրոնների համաշխարհային վարկանշավորման զեկույցում՝ պարբերաբար բարելավելով նախորդ տարվա ցուցանիշը: Արձանագրված արդյունքները առավել արժևորվում են այն համատեքստում, որ Փենսիլվանիայի համալսարանի կողմից դիտարկվող ուղեղային կենտրոնների թիվը տարեցտարի ավելանում է՝ ուժեղացնելով նաև մրցակցությունը: Այսպես՝ 2019 թ.-ին դիտարկվել են աշխարհի 8248 ուղեղային կենտրոններ, իսկ 2020 թ.-ին դրանց թիվն ավելացել է գրեթե 3000-ով՝ հասնելով 11175-ի: Արդյունքում, Փենսիլվանիայի համալսարանի ուղեղային կենտրոնների համաշխարհային վարկանշավորման 2020 թ. զեկույցում, որը հրապարակվեց 2021 թ. հուլիսին, ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնը «Կենտրոնական Ասիայի լավագույն ուղեղային կենտրոնները» դասակարգման մեջ, աննախադեպ առաջընթաց գրանցելով, միանգամից 9 տեղով բարելավել է իր դիրքը՝ զբաղեցնելով 50-րդ հորիզոնականը: Միաժամանակ, ինչպես և նախորդ տարի, «Ամբերդը» պահպանել է իր դիրքը աշխարհի լավագույն համալսարանական ուղեղային կենտրոնների (University affiliated think tanks) դասակարգման մեջ, որտեղ զբաղեցրել է 94-րդ հորիզոնականը:

ՀՊՏՀ զարգացման ռազմավարական նպատակներին համահունչ, ֆոնդահայթայթման բաժինն իրականացրել է ՀՊՏՀ կարիքների և ներուժի գնահատում, որին մասնակցել է մոտ 100 դասախոս/հետազոտող: Ըստ գնահատման արդյունքների՝ ստեղծվել է տվյալների շտեմարան, որը պարբերաբար կթարմացվի: Կարողությունների գնահատման հիման վրա ֆոնդահայթայթման բաժինը հաշվետու տարում սկսել է իր ակտիվ գործունեությունը՝ դիմելով մի քանի միջազգային հետազոտական ծրագրերի: Այսպես՝ մշակվել են «Դիմակայության ամրապնդումը Covid-19 համավարակի պայմաններում» հետազոտական և «Հայաստանի և Գերմանիայի բարձրագույն ուսումնական հաստատություններում թափոնների կառավարման մշակույթի ստեղծումը և ամրապնդումը՝ երիտասարդների ակտիվ ներգրավմամբ» երիտասարդական հայ-գերմանական, «Ընդլայնել հետազոտական հնարավորությունները» հայ-շվեդական համատեղ ծրագրերը: Միաժամանակ, Ցվիկաոյի կիրառական գիտությունների համալսարանի հետ համատեղ, ՀՊՏՀ-ն մասնակցել է «Smart Job Factory: Social

Entrepreneurship towards Transition to Sustainable Work (SET2WORK)» «Հորիզոն Եվրոպա» ծրագրի հայտի նախապատրաստման աշխատանքների:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ V

Ակադեմիական էթիկայի և սոցիալական պատասխանատվության սկզբունքների ներդրում

ՀՊՏՀ զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի «Ակադեմիական էթիկայի և սոցիալական պատասխանատվության սկզբունքների ներդրում» ռազմավարական նպատակին համապատասխան՝ զգալի աշխատանքներ են իրականացվել ակադեմիական բարեվարքության համակարգի ստեղծման ուղղությամբ, հատկապես հակագրագողության համակարգի ծրագրային և ինստիտուցիոնալ լուծումների առումով: Մասնավորապես՝ Միներվա ծրագրի շրջանակներում համալսարանը ձեռք է բերել անհրաժեշտ տեխնիկա և սարքավորումներ (սերվեր և UPS, սկաներ, համակարգիչներ և այլն), որոնց միջոցով պետք է սպասարկվեն հակագրագողության և գրադարանի հենքի վրա նախատեսվող ռեպոզիտարիայի ծրագրային փաթեթերը: Բացի դրանից, 2021 թ. ստորագրվել է Միներվայի մյուս հայկական գործընկեր բուհերի, ՀՀ Ազգային գրադարանի, ՀՀ ԲՈԿ-ի և ՌԴ Գիտությունների ակադեմիայի Վ. Պ. Իվանկովի անվան համակարգային ծրագրավորման ինստիտուտի հետ միասին կոնսորցիումի ստեղծման մասին համաձայնագիր, ըստ որի՝ հայկական բուհերը կստանան հակագրագողության հայաֆիկացված ծրագրային փաթեթի անժամկետ օգտագործման իրավունք՝ նշված բուհերի և կազմակերպությունների տվյալների միասնական բազայի հիման վրա:

ՀՊՏՀ սոցիալական պատասխանատվության ստանձման միջոցառումների շրջանակներում 2021 թ. ընդունվել է «Համալսարանում սովորող հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման» կարգը, և հաստատվել են հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2021 թ. տարեկան ծրագրի միջոցառումները: Ըստ այդմ՝ ձևավորվել է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման հարցերով զբաղվող խորհուրդ, կնքվել համագործակցության հուշագիր հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության հետ՝ համալսարանում ներառական կրթության զարգացման, հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների՝ կրթական գործընթացում լիարժեքորեն ներառման և նրանց համար հասանելիություն և որակ ապա-

հովելու նպատակով: «Հուլիսի կամուրջ» ՀԿ գործընկերների ներգրավմամբ ՀՊՏՀ վարչական տարբեր ստորաբաժանումների ղեկավարներ և աշխատակիցներ (25 մարդ), վերապատրաստվել են հաշմանդամություն ունեցող ուսանողների՝ համալսարանական կյանքին ինտեգրվելու ընթացքում առաջացող խնդիրների հաղթահարման ուղիների վերհանման, կարիքների գնահատման նպատակով: Հաշվետու տարում համալսարանն ապահովվել է նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար անհրաժեշտ ենթակառուցվածքներով. 3 մասնաշենքերում կառուցվել են թեքահարթակներ:

Հաշվետու տարում ՀՊՏՀ-ում ուսման վարձի մասնակի փոխհատուցման (զեղչի) իրավունք է ստացել 1545 ուսանող, որից 1081-ը՝ առանց, իսկ 464-ը՝ եկամտային հարկի պահումով:

Սոցիալական պատասխանատվության ծրագրեր իրականացվում են նաև աշխատակիցների համար: Այսպես՝ 2021 թ. 434 աշխատակցի համար ձեռք է բերվել առողջապահության ապահովագրության փաթեթ «Ռուսգոսստարխ Արմենիա» ընկերությունից, տրամադրվել են նպաստներ 4 նորաստեղծ ընտանիքների աջակցման և 16 երեխայի ծննդյան խրախուսման համար:

Ֆինանսական ու նյութական աջակցման ծրագրեր են իրագործվել՝ հասցեագրված Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում վիրավորում ստացած զինծառայողներին՝ պրոթեզավորման և վերականգնողական բուժման ստացման նպատակով:

2021 թ. ուշադրության կենտրոնում են եղել նաև հասարակայնության հետ կապերը: Մարքեթինգի և հասարակայնության հետ կապերի բաժինը շարունակել է իր աշխատանքը՝ սպասարկելով բուհի պաշտոնական կայքը, ֆեյսբուքյան պաշտոնական էջը, LinkedIn-ի և Instagram-յան էջերը, ՀՊՏՀ Youtube-յան ալիքը: Հարկ է նշել, որ հաշվետու տարում ՀՊՏՀ տեսանելիությունը բոլոր սոցիալական կայքերում էապես աճել է: Այսպես՝ ՀՊՏՀ պաշտոնական կայքի այցելուների թիվը 2021 թ., նախորդ տարվա համեմատ, աճել է 31.6%-ով, ՀՊՏՀ ֆեյսբուքյան էջի հավանողների և հետևորդների թվերը համապատասխանաբար՝ 14.2% և 14.9%-ով, իսկ ՀՊՏՀ Youtube-յան ալիքի բաժանորդները՝ 33.1%-ով:

Բուհի տեղեկատվական քաղաքականությունը և հանրային հաշվետվողականության գլխավոր հաղորդակցային ուղին պաշտոնական կայքն է, որտեղ տարվա ընթացքում բաժնի կողմից պատրաստվել և հրապարակվել են նորություններ, հայտարարություններ, բուհի կենսագործունեությունը կարգավորող բոլոր հիմնարար փաստաթղթերը, կառավարման մարմինների նիստերի օրակարգերը, որոշումները, ուսումնական գործընթացի կազմակերպմանը վերաբերող կարևոր տեղեկություններ,

որոշակի թարմացումներ են կատարվել կայքի բոլոր խորագրերում: Կայքում կատարվել են նաև խոշոր աշխատանքներ՝ ստեղծվել-վերակառուցվել են նոր խորագրեր, որոնց շարքում «Դիմորդ», «Միջազգային ծրագրեր» խորագրերը, ամբողջությամբ թարմացվել են ֆակուլտետների և ամբիոնային էջերը, իսկ այժմ թարմացվում է դասախոսական կազմի CV-ների էջը:

Տարվա ընթացքում իրականացվել են նաև խոշոր նախագծեր՝ «Սերունդ-2021» տեսանախագիծը՝ նվիրված ՀՊՏՀ լավագույն շրջանավարտներին, «Երիտասարդ դասախոս» հարցազրույցների շարքը՝ բուհի խոստումնալից դասախոսների հետ, «Լավագույն ուսանողներ» նախագիծը, որի նպատակն է հանրայնացնել բուհի լավագույն ուսանողներին և նրանց ձեռքբերումները, ինչպես նաև պատրաստվել է Արցախյան 44-օրյա պատերազմի մասնակից հերոս-ուսանողներին նվիրված և ՀՊՏՀ-ում բուհի ուսանողների մասնակցությամբ բեմադրված «Իմ անուշ տղա» ներկայացման ստեղծման մասին ֆիլմ:

ՀՊՏՀ-ն մեծապես կարևորում է սոցիալական պատասխանատվությունը թե՛ իր անմիջական շահառուների, թե՛ լայն հանրության հետ և այս համատեքստում ակադեմիական բոլոր կարևոր գործընթացները հասանելի դարձնում հանրությանը՝ սերտորեն համագործակցելով զանգվածային լրատվամիջոցների հետ: Անցնող տարում ևս ՀՊՏՀ խոշոր միջոցառումներն ու նախաձեռնությունը լայնորեն լուսաբանվել են զանգվածային լրատվամիջոցներում, օպերատիվ կերպով արձագանք է եղել լրատվամիջոցների հարցումներին, կազմակերպվել են բուհի ղեկավար կազմի հարցազրույցները, պատրաստվել և տարածվել են տասնյակ մամուլի հաղորդագրություններ, մամուլին տրվել են տասնյակ մեկնաբանություններ, հարցման պատասխաններ, պարզաբանումներ: «Ա1+» առցանց լրատվամիջոցի հետ համագործակցության արդյունքում ՀՊՏՀ ուսանողներն ու ասպիրանտները դարձել են «Երիտասարդ տնտեսություն» նախաձեռնության հերոսներ: Զանգվածային լրատվամիջոցներում ՀՊՏՀ-ի մասին հրապարակումների թիվը նախորդ տարվա համեմատ աճել է ավելի քան 100-ով՝ նախորդ տարվա 140-ի համեմատ այս տարի կազմելով շուրջ 240:

2021 թ.-ին ՀՊՏՀ-ն «Նոյան Տապան» լրատվական գործակալության հետ կնքել է համագործակցության պայմանագիր, որի շրջանակներում գործակալության յուրօրյան ալիքով սկսել է եթեր հեռարձակվել «Ամբերդ. քրոնիկոն» հաղորդաշարը, որի ընթացքում հանրային քննարկման են ներկայացվում «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից իրականացված հետազոտական ծրագրերում ուսումնասիրված հիմնախնդիրները: 2021 թ. հոկտեմբեր-դեկտեմբերին արդեն եթեր է հեռարձակվել նմանատիպ 6 հաղորդաշար:

ԽՆԴԻՐՆԵՐ

1. Ակադեմիական համակազմի հրապարակումների մեծ մասը՝ շուրջ 77%, հայերենով տպագրված պարբերականներում է, իսկ միջազգային հրապարակումներում գերակշռում են ռուսալեզու պարբերականներում լույս տեսած նյութերը:
2. Թեև կիրառվում է հեղինակների խրախուսման համակարգ, սակայն ազդեցության գործակից ունեցող միջազգային ամսագրերում, Scopus կամ WoS շտեմարաններում հրապարակումների թիվը փոքր է, հղման տոկոսը՝ ցածր, ինչը խոչընդոտում է որոշ միջազգային վարկանշավորման աղյուսակներում ներառվելուն և համալսարանի դիրքի առաջխաղացմանը՝ բարդացնելով բուհի միջազգայնացման գործընթացը:
3. Թեև վերջին երկու տարիներին զգալիորեն ակտիվացել է հետազոտական միջազգային դրամաշնորհային ծրագրերին դիմելու գործընթացը, այնուամենայնիվ, կապված կրթական և դրամաշնորհային միջազգային ծրագրեր մշակելու, դրանցում ներգրավվելու շահամիտվածության, օտար լեզուների իմացության և հմտությունների ոչ բավարար մակարդակի հետ, արդյունքները գոհացուցիչ չեն:
4. Փոքր են արտաքին համաֆինանսավորմամբ կամ ամբողջությամբ արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող հետազոտական ծրագրերի քանակն ու ֆինանսավորման ծավալները:
5. Ասպիրանտական բոլոր կրթաձևերում սովորողների միայն փոքր մասն է հասնում մինչև ավարտ՝ պաշտպանելով թեկնածուական ատենախոսություն: 2021 թ.-ին, բացառությամբ երեխայի խնամքի համար կրթության ընդհատման դեպքերի, տարբեր պատճառներով ասպիրանտուրայում կրթությունը սեփական դիմումի համաձայն ընդհատել է 10 ասպիրանտ կամ հայցորդ:
6. 2021 թ.-ին հետազոտությունների և մշակումների արտաքին ֆինանսավորման հանրային հիմնադրամի ձևավորման ուղղությամբ իրականացվել են որոշակի աշխատանքներ, սակայն շոշափելի հաջողություններ այս ուղղությամբ դեռևս չեն արձանագրվել:
7. Թեև ՀՊՏՀ moodle հարթակում դասընթացների 98%-ն ապահովված է ուսումնառության համար անհրաժեշտ հայերեն նյութերով, սակայն դրանց զգալի մասը, հատկապես նեղ մասնագիտական դասընթացների պարագայում, համապատասխան ամբիոնային և մասնագիտական քննարկումների գործընթացով անցած և պատշաճ հրատարակված ուսումնամեթոդական նյութեր չեն (գիտական խորհրդի

երաշխավորությամբ հրատարակված դասախոսությունների նյութ, ուսումնական ձեռնարկ կամ դասագիրք):

8. Դեռևս լիարժեքորեն չեն լուծվել արտերկրի առաջատար համալսարաններում լայն կիրառություն ունեցող միջազգային հրատարակությունների թարգմանության իրավունքի ստացման, թարգմանության և հրատարակման աշխատանքները՝ համարուհական դասընթացների համար:
9. Ուսումնառության ավարտին ուսանողների գիտելիքի կույր և ոչ կույր գնահատման մեթոդներով ձևավորված գնահատականների միջև տարբերությունը շարունակում է մնալ ոչ գոհացուցիչ: Մասնավորապես, ուսանողների՝ ոչ կույր գնահատման մեթոդով գնահատականները շարունակում են որոշակիորեն բարձր մնալ կույր մեթոդով գնահատականներից, ինչը ստվերում է համալսարանում գնահատման քաղաքականության արժանահավատությունը:
10. Ամփոփիչ ատեստավորումը չհաղթահարած ուսանողների տեսակարար կշիռը շարունակում է մնալ ՏԶՀ երկրների միջին ցուցանիշից ցածր, ինչը բացասաբար է անդրադառնում գործատուների շրջանում ՀՊՏՀ կերպարի վրա:
11. Թեպետ 2021 թ. կիրառված դասավանդման մեթոդներից և տրամադրված գրականությունից զգալիորեն աճել է ուսանողների բավարարվածության մակարդակը, 2017 և 2019 թթ. նույն ցուցանիշի համեմատ, սակայն դա դեռևս շարունակում է ցածր մնալ ուսանողների կողմից մոդուլի և դասավանդողի բազմագործոն գնահատման միջին թվաբանականից:
12. Միջազգայանցման ռազմավարական նպատակին հասնելու գործընթացում մարտահրավեր է նաև սովորողների շրջանում օտար լեզվի իմացության ոչ բավարար մակարդակը և միջազգայնորեն ճանաչված լեզվի ստուգման ներքին կառուցակարգերի բացակայությունը:
13. Հիմնախնդիր է օտար լեզվով բակալավրիական և մագիստրոսական ՄԿԾ-ների բացակայությունը՝ պայմանավորված միջազգային շուկային համապատասխան մրցակցային ծրագրեր մշակելու (եռամյա բակալավրի ծրագիր) օրենսդրական սահմանափակումներով:
12. ՀՊՏՀ կայքի սահմանափակ տեխնիկական հնարավորությունները խոչընդոտում են համալսարանի գործունեության և առկա ծրագրերի շուրջ ավելի համապարփակ տեղեկությունների տրամադրումը:
13. Գործարկված էլեկտրոնային համակարգերի (UMS, Moodle, ՀՊՏՀ պաշտոնական կայք, անցակետ) ինտեգրացիայի բացակայությունը բարդացնում է մեկ պատուհանի սկզբունքով (միասնական հավելվածով) ուսանողների և բուհի հաղորդակցման միասնական հարթակի գործարկումը:

14. Օրախնդիր է կրթական ծրագրերով նախատեսված փորձառությունների՝ նոր ձևաչափով մշակումը:
15. Ակնառու է ՀՊՏՀ ծրագրերում շրջանավարտների ներգրավվածության ցածր մակարդակը:
16. Մտահոգիչ է կարճաժամկետ դասընթացների և աշխատաժողովների համար ժամանակակից դիզայնով և տեխնոլոգիական լուծումներով հագեցած միջավայրերի (open space) սակավությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՊՏՀ կրթական ծրագրերը և մասնագիտությունները

Բակալավրիատ

Ծածկագիր	Ֆակուլտետ	Կրթական ծրագիր
031101.01.6	Տնտեսության կարգավորում և միջազգային տնտեսական հարաբերություններ	Տնտեսագիտություն
052201.01.6	Տնտեսության կարգավորում և միջազգային տնտեսական հարաբերություններ	Բնապահպանություն և բնօգտագործում
041101.01.6	Հաշվապահական հաշվառում և աուդիտ	Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)
041201.01.6	Ֆինանսներ	Ֆինանսներ (ըստ ոլորտի)
041301.01.6	Կառավարում	Կառավարում (ըստ ոլորտի)
101501.01.6	Կառավարում	Զբոսաշրջություն
101801.01.6	Կառավարում	Սերվիս
041401.01.6	Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպում	Շուկայագիտություն (մարքեթինգ) (ըստ ոլորտի)
056201.01.6	Ինֆորմատիկա և վիճակագրություն	Վիճակագրություն
056802.01.6	Ինֆորմատիկա և վիճակագրություն	Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա
061104.01.6	Ինֆորմատիկա և վիճակագրություն	Տեղեկատվական համակարգեր

Մագիստրատուրա

Ծածկագիր	Ֆակուլտետ	Կրթական ծրագիր
031101.02.7	Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների	Տնտեսագիտության տեսություն
031101.04.7	Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների	Միջազգային տնտեսական հարաբերություններ
031101.06.7	Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների	Բնօգտագործման տնտեսագիտություն
031101.15.7	Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների	Տնտեսության պետական կարգավորում
031101.16.7	Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների	Մակրոտնտեսական վերլուծություն
031101.21.7	Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների	Նորարարությունների տնտեսագիտություն
041201.08.7	Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների	Մաքսային վարչարարություն
041301.16.7	Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների	Պետական գույքի կառավարում
041101.01.7	Հաշվապահական հաշվառման և աուդիտի	Հաշվապահական հաշվառում (ըստ ոլորտի)
041101.03.7	Հաշվապահական հաշվառման և աուդիտի	Աուդիտ
041301.07.7	Կառավարման	Հանրային ծառայությունների բիզնեսի կազմակերպում և կառավարում

041301.04.7	Կառավարման	Գործարար վարչարարություն (կառավարում)
041301.11.7	Կառավարման	Զբոսաշրջության կառավարում
041301.13.7	Կառավարման	Նախագծերի կառավարում
041301.17.7	Կառավարման	Հանրային կառավարում
041301.28.7	Կառավարման	Բուժհաստատությունների կառավարում
041301.31.7	Կառավարման	Առողջապահության կառավարում և վարչարարություն
041301.33.7	Կառավարման	Արդյունաբերական բիզնեսի կազմակերպում և կառավարում
041301.15.7	Ինֆորմատիկայի և վիճակագրության	Կառավարման տեղեկատվական համակարգեր
041301.32.7	Ինֆորմատիկայի և վիճակագրության	Տեղեկատվական տեխնոլոգիաները բիզնեսում
031101.08.7	Ինֆորմատիկայի և վիճակագրության	Մաթեմ. մեթոդներ և մոդելները տնտ. մեջ
056201.04.7	Ինֆորմատիկայի և վիճակագրության	Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն
041401.04.7	Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման	Մարքեթինգային հաղորդակցություններ
041301.27.7	Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման	Մարդկային ռեսուրսների կառավարում
041201.02.7	Ֆինանսների	Ապահովագրական գործ
041201.03.7	Ֆինանսների	Հանրային ֆինանսներ
041201.04.7	Ֆինանսների	Կորպորատիվ ֆինանսներ
041201.05.7	Ֆինանսների	Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում
041201.06.7	Ֆինանսների	Բանկային գործունեության կազմակերպում

ՀՊՏՀ դասախոսական և վարչական անձնակազմը

Հիմնական

Պաշտոնը/կոչումը	Քանակը	Այդ թվում՝ վարչական համալսարաններ
Պրոֆեսոր	17	3
Դոցենտ	151	19
Ավագ դասախոս	26	-
Դասախոս	81	8
Ասիստենտ	25	2
Վարչական աշխատողներ	245	-
Ընդամենը	545	32

Համալսարանային և ժամավճարով աշխատողներ

Պաշտոնը/կոչումը	Համալսարանային	Ժամավճարային կարգով
Պրոֆեսոր	1	3
Դոցենտ	18	10
Ավագ դասախոս	1	1
Դասախոս	40	37
Ասիստենտ	12	16
Վարչական աշխատողներ	4	2
Ընդամենը	76	69

Գյումրու մասնաճյուղ

Պաշտոնը/կոչումը	Հիմնական	Համալսարանային	Ժամավճարային կարգով
Պրոֆեսոր	1	3	2
Դոցենտ	6	7	4
Ավագ դասախոս	5	13	0
Դասախոս	2	3	25
Ասիստենտ	0	1	5
Վարչական աշխատողներ	29	1	0
Ընդամենը	43	28	36


Եղեգնաձորի մասնաճյուղ

Պաշտոնը/կոչումը	Հիմնական	Համալսարանային	Ժամավճարային կարգով
Դոցենտ	1	3	-
Դասախոս	4	2	-
Ասիստենտ	1	3	6
Վարչական աշխատողներ	6	-	-
Ընդամենը	12	8	6

Ֆինանսարենտագիտական քոլեջ

Պաշտոնը/կոչումը	Հիմնական (քանակը)	Ժամավճարային կարգով (քանակը)
Դասախոս	26	36
Ուսուցիչ	10	6
Արտադրական ուսուցման վարպետ	10	-
Վարչական աշխատողներ	23	-
Ընդամենը	69	42

ՀՊՏՀ հիմնական, համադրելիությանը և ժամավճարային կարգով աշխատող աշխատակիցների տեսակարար կշիռ, 2021 թ.



Սովորողների կազմը

Առկա ուսուցում

Բակալավրիատ

Ֆակուլտետ/մասնագիտություն	1-ին կուրս		2-րդ կուրս		3-րդ կուրս		4-րդ կուրս		Ընդ.
	Անվճ.	Վճ.	Անվճ.	Վճ.	Անվճ.	Վճ.	Անվճ.	Վճ.	
Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետ									
Վիճակագրություն	9	19	8	24	-	-	7	19	86
Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա	2	34	1	27	-	-	-	-	64
Տեղեկատվական համակարգեր	1	39	1	27	-	-	-	-	68
Կառավարման ֆակուլտետ									
Կառավարում/ըստ ոլորտի/	15	169	12	160	14	171	12	82	635
Սերվիս	1	15	1	32	-	-	-	-	49
Զբոսաշրջություն	-	-	2	34	-	-	-	-	36
Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ									
Մարքեթինգ	12	127	8	74	5	80	10	37	353
Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ									
Հաշվապահական հաշվառում և հարկում	12	163	13	134	11	99	12	65	509
Ֆինանսական ֆակուլտետ									
Ֆինանսներ (ըստ ոլորտի)	12	185	12	181	15	185	14	126	730
ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետ									
Տնտեսագիտություն	13	151	16	107	22	45	13	32	399
Բնապահպանություն և բնօգտագործում	3	8	1	18	-	-	-	-	30
Ընդամենը	80	910	75	818	67	580	68	361	2959

Մագիստրատուրա

Ֆակուլտետ/մասնագիտություն	1-ին կուրս		2-րդ կուրս		Ընդ.
	Անվճ.	Վճ.	Անվճ.	Վճ.	
Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետ					
Տեղեկատվական տեխնոլոգիաները բիզնեսում	3	11	9	19	42
Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն	4	4	2	15	25
Կառավարման ֆակուլտետ					
Գործարար վարչարարություն	11	17	8	33	69
Հանրային կառավարում	2	11	5	11	29
Հանրային ծառայությունների բիզնեսի կազմակերպում և կառավարում	-	11	1	5	17
Արդյունաբերական բիզնեսի կազմակերպում և կառավարում	-	-	-	13	13
Առողջապահության կառավարում և վարչարարություն	-	17	-	-	17
Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ					
Մարքեթինգային հաղորդակցություն	12	18	12	21	63
Նախագծերի կառավարում	1	13	3	6	23
Բիզնեսի կազմակերպում	-	-	-	9	9
Մարդկային ռեսուրսների կառավարում	3	25	0	20	48
Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ					
Հաշվապահական հաշվառում և հարկում	4	12	7	11	34
Աուդիտ	13	25	9	20	67
Ֆինանսական ֆակուլտետ					
Հանրային ֆինանսներ	1	8	1	7	17
Արժեթղթերի շուկայի վերլ. և կառավ.	6	3	4	5	18
Կորպորատիվ ֆինանսներ	4	7	2	9	22
Բանկային գործունեության կազմակերպում	9	21	20	43	93
ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետ					
Միջազգային տնտեսական հարաբերություններ	6	13	7	5	31
Բնօգտագործման տնտեսագիտություն	1	7	2	6	16
Տնտեսագիտության տեսություն	4	8	4	10	26
Մաքսային վարչարարություն	1	15	3	20	39
Մակրոտնտեսական վերլուծություն	6	4	7	6	23
Տնտեսության պետական կարգավորում	-	-	3	5	8
Նորարարությունների տնտեսագիտություն	1	4	-	-	5
Ընդամենը	92	254	109	299	754

Հեռակա ուսուցում

Բակալավրիատ

Ֆակուլտետ/ մասնագիտություն	1-ին կուրս	2-րդ կուրս	3-րդ կուրս	4-րդ կուրս	5-րդ կուրս	Ընդ.
Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետ						
Վիճակագրություն	-	-	-	13	-	13
Կառավարման ֆակուլտետ						
Կառավարում (ըստ ոլորտի)	98	101	115	69	90	473
Սերվիս	11	-	-	-	-	11
Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ						
Մարքեթինգ	49	48	68	46	56	267
Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ						
Հաշվապահական հաշվառում և հարկում	49	63	95	90	86	383
Ֆինանսական ֆակուլտետ						
Ֆինանսներ (ըստ ոլորտի)	116	154	182	135	141	728
ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետ						
Տնտեսագիտություն	32	42	41	29	39	183
Ընդամենը	355	408	501	382	412	2058


Մագիստրատուրա

Ֆակուլտետ/մասնագիտություն	1-ին կուրս	2-րդ կուրս	3-րդ կուրս	Ընդ.
Կառավարման ֆակուլտետ				
Գործարար վարչարարություն	11	-	19	30
Արդյունաբերական բիզնեսի կազմակերպում և կառավարում	-	9	-	9
Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ				
Մարքեթինգային հաղորդակցություն	10	19	30	59
Բիզնեսի կազմակերպում	-	-	10	10
Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ				
Հաշվապահական հաշվառում և հարկում	-	6	16	22
Աուդիտ	11	9	10	30
Ֆինանսական ֆակուլտետ				
Հանրային ֆինանսներ	10	11	21	42
Բանկային գործունեության կազմակերպում	-	17	18	35
ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետ				
Միջազգային տնտեսական հարաբերություններ	-	-	7	7
Մաքսային վարչարարություն	11	-	-	11
Ընդամենը	53	71	131	255

2021 թ. դրությամբ համալսարանի ուսանողների թիվը 6026 է, այդ թվում.

- առկա ուսուցման բակալավրիատ՝ 2959
- հեռակա ուսուցման բակալավրիատ՝ 2058
- առկա ուսուցման մագիստրատուրա՝ 754
- հեռակա ուսուցման մագիստրատուրա՝ 255

2020 և 2021 թվականներին ուսանողների թիվն ըստ կրթաձևերի



Ասպիրանտուրա


Մասնագիտություն	Առկա	Հեռակա	Հայցորդ	Դոկտորանդ
Ը.00.01. Տնտեսագիտության տնտեսագիտություն և տնտեսագիտական միջին պատմություն	2	-	1	-
Ը.00.02. Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում	17/6	8/1	15/9	3/1
- Կառավարում	10/4	5	10/5	2/1
- Բիզնես վարչարարություն	3	1	1	1
- Մակրոէկոնոմիկա	2/1	1	3/3	-
- Միկրոէկոնոմիկա և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում	1	-	1/1	-
- Մարքեթինգ	-	1/1	-	-
- Բնօգտագործման տնտեսագիտություն	1/1	-	-	-
Ը.00.03. Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում	12/5	5	5/2	3/1
- Ֆինանսներ	6/2	2	2/1	2/1
- Բանկային գործ և ապահովագրություն	2	1	1/1	-
- Կառավարչական հաշվառում և աուդիտ	3/2	-	1	-
- Ֆինանսական հաշվառում	1/1	2	1	1
- Վիճակագրություն	-	-	-	-
Ը.00.06. Միջազգային տնտեսական հարաբերություններ	4/2	2	7/7	-
Ը.00.08. Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում	7/2	-	3/3	-
- Տնտեսամաթեմատիկական մեթոդներ	6/2	-	3/3	-
- Տնտեսական ինֆորմատիկա և տեղեկատվական համակարգեր	1	-	-	-
Ընդամենը	42/15	15/1	31/21	6/2

- կոտորակի հայտարարում նշված են ընդհանուր թվում ներառված վճարովի հիմունքով սովորող ասպիրանտները, հայցորդներն ու դոկտորանտները:


2021-2022 ուսումնական տարում ՀՊՏՀ (այդ թվում՝ մասնաճյուղեր) ընդունված ուսանողների թիվը

Ֆակուլտետ/մասնագիտություն	Բակալավրիատ		Մագիստրատուրա	
	<i>Առկա</i>	<i>Հեռ.</i>	<i>Առկա</i>	<i>Հեռ.</i>
<i>Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետ</i>				
Վիճակագրություն	29	-	-	-
Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա	44	-	-	-
Տեղեկատվական համակարգեր	51	-	-	-
Տեղեկատվական տեխնոլոգիաները բիզնեսում	-	-	14	-
Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն	-	-	8	-
<i>Կառավարման ֆակուլտետ</i>				
Կառավարում (ըստ ոլորտի)	199	96	-	-
Սերվիս	14	-	-	-
Զբոսաշրջություն	1	-	-	-
Գործարար վարչարարություն	-	-	28	12
Հանրային կառավարում	-	-	14	-
Մարդկային ռեսուրսների կառավարում	-	-	25	-
Հանրային ծառայությունների բիզնեսի կազմակերպում և կառավարում	-	-	11	-
Արդյունաբերական բիզնեսի կազմակերպում և կառավ.	-	-	0	-
Առողջապահության կառավարում և վարչարարություն	-	-	18	-
<i>Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ</i>				
Մարքեթինգ	154	47	28	10
Նախագծերի կառավարում	-	-	3	-
<i>Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ</i>				
Հաշվապահական հաշվառում և հարկում	192	51	16	-
Աուդիտ	-	-	38	15
<i>Ֆինանսական ֆակուլտետ</i>				
Ֆինանսներ (ըստ ոլորտի)	200	114		
Հանրային ֆինանսներ	-	-	10	12
Արժեթղթերի շուկայի վերլ. և կառավ.	-	-	9	-
Կորպորատիվ ֆինանսներ	-	-	13	-
Բանկային գործունեության կազմակերպում	-	-	32	-
<i>ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետ</i>				
Տնտեսագիտություն	183	33	-	-
Բնապահպանություն և բնօգտագործում	13	-	-	-
Տնտեսագիտության տեսություն	-	-	12	-
Միջազգային տնտեսական հարաբերություններ	-	-	19	-
Մաքսային վարչարարություն	-	-	16	11
Մակրոտնտեսական վերլուծություն	-	-	12	-
Տնտեսության պետական կարգավորում	-	-	0	-
Բնօգտագործման տնտեսագիտություն	-	-	8	-
Նորարարությունների տնտեսագիտություն	-	-	4	-
<i>Սփյուռքահայ կամ օտարերկրյա դիմորդներ</i>	27	9	0	-
<i>Ընդամենը՝ ՀՊՏՀ</i>	1107	350	338	60
<i>ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ</i>	13	25	13	-
<i>ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ</i>	90	30	23	-
<i>Ընդամենը</i>	1210	405	374	60

2021-2022 ուսումնական տարում ՀՊՏՀ ընդունված ուսանողների թիվը (ընդամենը)




ՀՊՏՀ ուսանողների ընդունելության փվյալներն ըստ առանձին կրթաձևերի (2017-2021 թթ.)



**2020-2021 ուսումնական տարվա և նախորդ տարիների ՀՊՏՀ շրջանավարտների
(երկտարեցիների) թիվը**

Ֆակուլտետ/մասնագիտություն	Բակալավրիատ		Մագիստրատուրա	
	<i>Առկա</i>	<i>Հեռ.</i>	<i>Առկա</i>	<i>Հեռ.</i>
Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետ				
Վիճակագրություն	23	0	0	0
2020/2021 ուսումնական տարվա շրջանավարտներ	23	0	0	0
Նախորդ տարիների շրջանավարտներ (երկտարեցի)	0	0	0	0
Կառավարման ֆակուլտետ				
Կառավարում (ըստ ոլորտի)	179	99	0	0
Գործարար վարչարարություն (կառավարում)	0	0	82	20
Հանրային կառավարում	0	0	18	0
Ձեռնարկատիրական գործունեություն	0	0	9	0
Առողջապահության կառավարում և վարչարարություն	0	0	20	0
Աշխ. և աշխատավարձի կազմ. ծառայությունների ոլորտում	0	0	0	0
2020/2021 ուսումնական տարվա շրջանավարտներ	179	99	129	20
Նախորդ տարիների շրջանավարտներ (երկտարեցի)	0	3	4	0
Մարքեթինգի և փզնեսի կազմակերպման ֆակուլտետ				
Շուկայագիտություն (մարքեթինգ) (ըստ ոլորտի)	92	48	0	0
Մարքեթինգային հաղորդակցություններ	0	0	23	22
Քիզնեսի կազմակերպում	0	0	11	22
Նախագծերի կառավարում	0	0	1	0
2020/2021 ուսումնական տարվա շրջանավարտներ	92	48	35	44
Նախորդ տարիների շրջանավարտներ (երկտարեցի)	0	2	0	1
Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ				
Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	179	87	0	0
Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)	0	0	13	18
Աուդիտ	0	0	23	16
2020/2021 ուսումնական տարվա շրջանավարտներ	179	87	36	34
Նախորդ տարիների շրջանավարտներ (երկտարեցի)	1	4	0	1
Ֆինանսական ֆակուլտետ				
Ֆինանսներ (ըստ ոլորտի)	206	133	0	0
Հանրային ֆինանսներ	0	0	16	32
Կորպորատիվ ֆինանսներ	0	0	21	19
Բանկային գործունեության կազմակերպում	0	0	24	40
2020/2021 ուսումնական տարվա շրջանավարտներ	206	133	61	91
Նախորդ տարիների շրջանավարտներ (երկտարեցի)	0	3	0	0
ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետ				
Տնտեսագիտություն	95	38	0	0
Տնտեսագիտության տեսություն	0	0	8	0
Միջազգային տնտեսական հարաբերություններ	0	0	18	15
Մակրոտնտեսական վերլուծություն	0	0	20	0
Բնօգտագործման տնտեսագիտություն	0	0	12	0
2020/2021 ուսումնական տարվա շրջանավարտներ	95	38	58	15
Նախորդ տարիների շրջանավարտներ (երկտարեցի)	1	1	0	0
ԸՆդամենը՝ 2020/2021 ուսումնական տարվա ՀՊՏՀ շրջան.	774	405	319	204
ԸՆդամենը՝ նախորդ տարիների ՀՊՏՀ շրջանավարտներ (երկտարեցի)	2	13	4	2
ԸՆԴԱՄԵՆԸ	776	418	323	206

Շրջանավարտների թիվը 2017–2021 թթ.



2020-2021 ուսումնական տարվա քննաշրջանների արդյունքները

Առկա ուսուցում


Բակալավրիատ

Ֆակուլտետ/մասնագիտություն	Ուսանողների թիվը (ընդամենը)	Առաջադիմություն (%)	90% և ավելի ՄՈԳ ունեցող ուսանողներ (քանակ)	Անցողիկ շեմը չհաղթահարած ուսանողներ (քանակ)
Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետ				
Վիճակագրություն	23	83	12	0
Կառավարման ֆակուլտետ				
Կառավարում (ըստ ոլորտի)	466	85.8	22	66
Զբոսաշրջություն	38	84.2	1	6
Սերվիս	34	85.3	-	5
Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ				
Մարքեթինգ	219	84	48	35
Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ				
Հաշվապահական հաշվառում և հարկում	353	97.7	56	8
Ֆինանսական ֆակուլտետ				
Ֆինանսներ (ըստ ոլորտի)	547	91.7	60	45
ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետ				
Տնտեսագիտություն	243	70.4	47	72


Մագիստրատուրա

Ֆակուլտետ/մասնագիտություն	Ուսանողների թիվը (ընդամենը)	Առաջադիմություն (%)	90% և ավել ՄՈԳ ունեցող ուսանողներ (քանակ)	Անցողիկ շեմը չհաղթահարած ուսանողներ (քանակ)
Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետ				
Տեղեկատվական տեխնոլոգիաները բիզնեսում	31	90.3	19	3
Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն	17	100	8	0
Կառավարման ֆակուլտետ				
Գործարար վարչարարություն	43	93.0	8	3
Հանրային կառավարում	17	82.4	6	3
Առողջապահության կառավարում և վարչարարություն	20	65	3	7
Արդյունաբերական բիզնեսի կազմակերպում և կառավարում	14	78.6	-	3
Հանրային ծառայությունների բիզնեսի կազմակերպում և կառավարում	8	75	-	2
Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ				
Մարքեթինգային հաղորդակցություն	34	97	32	1
Բիզնեսի կազմակերպում	9	77.7	2	2
Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ				
Հաշվապահական հաշվառում և հարկում	18	100	13	-
Աուդիտ	30	100	19	-
Ֆինանսական ֆակուլտետ				
Հանրային ֆինանսներ	9	88.9	3	1
Կորպորատիվ ֆինանսներ	11	100	5	0
Բանկային գործունեության կազմակերպում	9	100	7	0
ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետ				
Տնտեսագիտության տեսություն	15	80	8	3
Միջազգային տնտեսական հարաբերություններ	12	100	12	0
Մակրոտնտեսական վերլուծություն	13	92.3	8	1
Բնօգտագործման տնտեսագիտություն	9	77.8	5	2
Մաքսային վարչարարություն	24	75	10	6
Տնտեսության պետական կարգավորում	9	100	4	0

Առկա բակալավրիատի միջին առաջադիմությունն ըստ ֆակուլտետների



Առկա մագիստրատուրայի միջին առաջադիմությունն ըստ ֆակուլտետների



Հեռակա ուսուցում


Բակալավրիատ

Ֆակուլտետ/մասնագիտություն	Ուսանողների թիվը (ընդամենը)	Առաջադիմություն (%)	90% և ավելի ՄՈԳ ունեցող ուսանողներ (քանակ)	Անցողիկ շեմը չհաղթահարած ուսանողներ (քանակ)
Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետ				
Վիճակագրություն	13	61.5	0	5
Կառավարման ֆակուլտետ				
Կառավարում (ըստ ոլորտի)	341	70.4	6	101
Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ				
Մարքեթինգ	211	68.7	19	66
Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ				
Հաշվապահական հաշվառում և հարկում	299	97.6	36	7
Ֆինանսական ֆակուլտետ				
Ֆինանսներ (ըստ ոլորտի)	544	81.9	39	98
ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետ				
Տնտեսագիտություն	152	44.7	3	84


Մագիստրատուրա

Ֆակուլտետ/մասնագիտություն	Ուսանողների թիվը (ընդամենը)	Առաջադիմություն (%)	90% և ավելի ՄՈԳ ունեցող ուսանողներ (քանակ)	Անցողիկ շեմը չհաղթահարած ուսանողներ (քանակ)
Կառավարման ֆակուլտետ				
Գործարար վարչարարություն	20	90	1	2
Արդյունաբերական բիզնեսի կազմակերպում և կառավարում	11	72.7	1	3
Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետ				
Մարքեթինգային հաղորդակցություն	49	95.9	23	2
Բիզնեսի կազմակերպում	10	80	1	2
Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ				
Հաշվապահական հաշվառում և հարկում	26	100	7	-
Աուդիտ	19	100	8	-
Ֆինանսական ֆակուլտետ				
Հանրային ֆինանսներ	12	83.3	0	2
Բանկային գործունեության կազմակերպում	21	90.5	0	2
ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետ				
Միջազգային տնտեսական հարաբերություններ	7	71.4	0	2

Հեռակա բակալավրիատի միջին առաջադիմությունն ըստ ֆակուլտետների




Հեռակա մագիստրատուրայի միջին առաջադիմությունն ըստ ֆակուլտետների




Էլեկտրոնային կառավարման ցուցանիշներ


Moodle.asue.am հարթակում 2021-2022 ուսարվա դասընթացների մոդուլների թիվն ըստ կրթաձևերի




Moodle.asue.am հարթակում 2021-2022 ուստարվա դասընթացների՝ ՀՊՏՀ սահմանած չափանիշներին համապատասխանության աստիճանն ըստ կրթաձևերի



Moodle հարթակ բոլոր օգտատերերի գումարային մուտքերը օգոստոսի 29-նոյեմբերի 30 ժամանակահատվածում



Moodle հարթակ մուտքերի թիվն ըստ օգտատերերի և որոշակի ամիսների



2020-2021 ուսումնական տարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքները

Առկա ուսուցում

Բակալավրիատ

Մասնագիտությունը	Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար
Վիճակագրություն	11	8	4	0
Կառավարում (ըստ ոլորտի)	75	49	52	3
Շուկայագիտություն (մարքեթինգ) (ըստ ոլորտի)	58	21	13	0
Հաշվ. հաշվ. և հարկում (ըստ ոլորտի)	45	46	88	1
Ֆինանսներ (ըստ ոլորտի)	85	48	73	0
Տնտեսագիտություն	34	26	36	0
Ընդամենը	308	198	266	4

Մագիստրատուրա

Մասնագիտությունը	Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար
Գործարար վարչարարություն (կառավարում)	70	9	6	0
Հանրային կառավարում	14	3	2	0
Առողջապահության կառավարում և վարչարարություն	7	11	1	1
Ձեռնարկատիրական գործունեություն	5	2	2	0
Մարքեթինգային հաղորդակցություններ	21	1	1	0
Բիզնեսի կազմակերպում	5	3	3	0
Նախագծերի կառավարում	1	0	0	0
Հաշվապահական հաշվառում և հարկում	10	2	1	0
Աուդիտ	23	0	0	0
Հանրային ֆինանսներ	14	1	1	0
Կորպորատիվ ֆինանսներ	17	2	2	0
Բանկային գործունեության կազմակերպում	24	0	0	0
Տնտեսագիտության տեսություն	4	2	1	1
Միջազգային տնտեսական հարաբերություններ	16	1	1	0
Մակրոտնտեսական վերլուծություն	15	5	0	0
Բնօգտագործման տնտեսագիտություն	8	0	4	0
Ընդամենը	254	42	25	2

Հեռակա ուսուցում


Բակալավրիատ

Մասնագիտությունը	Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար
Կառավարում (ըստ ոլորտի)	12	24	66	0
Շուկայագիտություն (մարքեթինգ) (ըստ ոլորտի)	5	7	37	1
Հաշվ. հաշվ. և հարկում (ըստ ոլորտի)	17	20	52	2
Ֆինանսներ (ըստ ոլորտի)	14	21	99	2
Տնտեսագիտություն	1	8	30	0
Ընդամենը	49	80	284	5

Մագիստրատուրա

Մասնագիտությունը	Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար
Գործարար վարչարարություն (կառավարում)	4	6	9	1
Բիզնեսի կազմակերպում	4	5	12	1
Մարքեթինգային հաղորդակցություններ	9	11	0	3
Հաշվապահական հաշվառում և հարկում	8	2	7	1
Աուդիտ	10	0	7	0
Հանրային ֆինանսներ	10	6	15	1
Կորպորատիվ ֆինանսներ	5	5	8	1
Բանկային գործունեության կազմակերպում	21	10	8	1
Միջազգային տնտեսական հարաբերություններ	1	7	7	0
Ընդամենը	72	52	73	9


Ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները



Հաշվետու ժամանակահատվածում ուսուցման բոլոր ձևերում և մակարդակներում ըստ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների թույլատրված 1723 շրջանավարտից 21-ը նախորդ տարիներից է: 1723 շրջանավարտից 20-ը չի ավարտել համալսարանը, իսկ 1703-ն ավարտել է և ստացել դիպլոմ՝ համապատասխան որակավորումներով.

- առկա ուսուցման բակալավրիատ՝ 772,
- հեռակա ուսուցման բակալավրիատ՝ 413,
- առկա ուսուցման մագիստրատուրա՝ 321,
- հեռակա ուսուցման մագիստրատուրա՝ 197:

2021 թ. ուսանողական նպաստի ձևով մասնակի փոխհատուցման (զեղչի) իրավունք ստացած ուսանողների ընդհանուր թիվը



Գիտահետազոտական գործունեության արդյունքները

	Ամբիոն/ստորաբաժանում	Հոդված	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Թեզիս
1	Կառավարման ամբիոն	16	1	2	-
2	Միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ամբիոն	6	4	1	-
3	Մակրոէկոնոմիկայի ամբիոն	28	2	-	-
4	Տնտեսագիտության տեսության ամբիոն	7	-	2	-
5	Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոն	10	-	-	-
6	Բնօգտագործման տնտեսագիտության ամբիոն	4	-	-	-
7	Հասարակագիտության ամբիոն	7	2	2	-
8	Ֆինանսների ամբիոն	36	-	-	-
9	Բանկային գործի և ապահովագրության ամբիոն	7	-	1	-
10	Մարքեթինգի ամբիոն	4	1	-	-
11	Բիզնես վարչարարության ամբիոն	10	-	-	-
12	Վիճակագրության ամբիոն	9	-	1	-
13	Տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոն	22	-	2	3
14	Տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատ. համակ. ամբիոն	11	-	-	-
15	Ֆինանսական հաշվառման ամբիոն	6	-	1	-
16	Կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոն	11	-	3	-
17	Բարձրագույն մաթեմատիկայի ամբիոն	5	-	3	-
18	Լեզուների ամբիոն	30	-	5	1
19	Ֆիզդաստիարակության, արտակարգ իրավիճակների և քաղաքաշտպանության ամբիոն	8	-	-	-
Ընդամենը՝ ամբիոններ		237	10	23	4
Գյումրու մ/ճ		17	-	1	-
Եղեգնաձորի մ/ճ		5	-	-	-
«Ամբերդ» հետազոտական կենտրոն, որից		83	16	2	2
• «Ինովացիոն և ինստիտուցիոնալ հետազոտություններ» գիտաուսումնական լաբորատորիա		12	-	2	2
• «Տնտեսության անորոշության մոդելավորում» գիտաուսումնական լաբորատորիա		3	-	-	-
Ընդամենը		357	26	28	8

Տպագրված հոդվածները

	Ամբիոններ	Գյումրու մ/ճ	Եղեգնաձորի մ/ճ	«Ամբերդ» հետազոտական կենտրոն
ԲՈԿ-ի կողմից ընդունելի տեղական ամսագրերում	115	9	5	16
Միջազգային հրապարակումներ, այդ թվում՝	79	6	-	12
Scopus կամ WoS շտեմարաններում	7	-	-	9
Ազդեցության գործակից ունեցող ամսագրերում	30	-	-	5

Մասնակցությունը գիտական միջոցառումներին

Ամբիոն/ստորաբաժանում	Գիտաժողովներ	Դրամաշնորհներ	Սեմինարներ	Workshop
Ամբիոններ	66	16	37	33
Գյումրու մ/ճ	7	9	42	19
Եղեգնաձորի մ/ճ	-	2	-	-
«Ամբերդ» հետազոտական կենտրոն	11	10	6	12

Պաշտպանված արենախոսությունները

Մասնագիտությունը և ծածկագիրը	Արենախոսությունների քանակը		Ընդամենը
	թեկնածուական	դոկտորական	
Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»	1	-	1
Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»	2	-	2

«Ամբերդ» հեղափոխական կենտրոնի իրականացրած հեղափոխական ծրագրերը

Անվանումը	Պարզվիրաբու կազմակերպությունը	Մասնակիցների թիվը
ՀՀ արդյունաբերության մրցունակության բարելավման հնարավորությունները	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	5
ՀՀ սահմանամերձ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հայեցակարգային մոտեցումների մշակումը	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	5
Բնակչության զբաղվածության ապահովման հիմնախնդիրներն ու պետական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	6
Թուրքիայի կողմից Հայաստանի ապաշրջափակման մարտահրավերներն ու հնարավորությունները:	ՀՀ Անվտանգության խորհուրդ	5
Ինժեներական Էկոհամակարգեր և արդյունաբերության մեջ նորարարությունների խթանում. միջազգային փորձ, օրենսդրական դաշտ, զարգացման միտումներ	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	6
ՀՀ թռչնամսի շուկայի հետազոտություն	ՀՀ Մրցակցության պաշտպանության հանձնաժողով	6
Գյուղատնտեսության մրցունակության բարելավման հիմնախնդիրները ՀՀ Վայոց ձորի և Արարատի մարզերում	Ներքին շահառուներ	6
ՀՀ Սյունիքի և Վայոց ձորի մարզերի համալիր զարգացման տեսլականը	Ներքին շահառուներ	5
ՀՀ ժողովրդագրական հիմնախնդիրները պատերազմի և համավարակի հետևանքների գնահատման համատեքստում	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ	6

Մենագրությունների ցանկը
«ԱՄԲԵՐԴ»

№	Հեղինակը (ներք)	Անվանումը	Քննարկ	Ելակետային տվյալները	Ծավալը
1.	Սամվել Ավետիսյան, Գայանն Թովմասյան, Լուսյա Միրիջանյան, Քրիստինե Թաթևյան, Ինգա Գալուստյան, Արզիմե Ռուջանյան	Ազդեցության և հարգանքի միջոցով հանրային կյանքի կազմակերպումը ՀՀ մարզերում (ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի օրինակով)	Տպ.	Եր.: Տնտեսագետ, 2021 («Ամբերդ» մատենաշար): DOI: 10.52174/978-9939-61-219-5	142 էջ
2.	Արմեն Քոչարյան, Ելենա Մանուկյան, Անուշ Շիրինյան, Աննա Մատինյան, Դավիթ Հարությունյան, Մարիետա Ազատյան	Կրթական հաստատությունների գործունեության ֆինանսավորման արդյունավետության գնահատում	Տպ.	Եր.: Տնտեսագետ, 2021.- («Ամբերդ» մատենաշար): DOI: 10.52174/978-9939-61-220-1	156 էջ.
3.	Արիմեն Հովակիմյան Ծովինար Կարապետյան Գարիկ Սիրոյան Լիանա Ֆրիանյան Մարիամ Խաչատրյան	Միջհամայնքային համագործակցության առանձնահատկությունները ՀՀ Վայոց ձորի մարզի տնտեսական զարգացման համատեքստում	Տպ.	Եր.: Տնտեսագետ, 2021.- («Ամբերդ» մատենաշար 39): DOI: 10.52174/978-9939-61-222-5	110 էջ
4.	Զոյա Թադևոսյան Ալբերտ Հայրապետյան Թարևոս Ավետիսյան Արման Սարգսյան Տաթևիկ Մկրտչյան Դիանա Մաթևոսյան Կամո Դավթյան	Հայաստանի Հանրապետության աշխատաշուկայի վերլուծություն և զբաղվածության պետական կարգավորման ծրագրային լուծումներ	Տպ.	Եր.: Տնտեսագետ, 2021.- («Ամբերդ» մատենաշար 40): DOI: 10.52174/978-9939-61-221-8	244 էջ
5.	Թաթևոս Մկրտչյան Զարուհի Մելքոնյան Գուրգեն Օհանյան Վազգեն Պողոսյան Լուսինե Խաչիկյան	ՀՀ ցորենի և այլուրի շուկաների հետազոտություն	Տպ.	Եր.: Տնտեսագետ, 2021.- («Ամբերդ» մատենաշար 41): DOI: 10.52174/978-9939-61-227-0	102 էջ
6.	Հայկ Բեջանյան Եվգենյա Բագինյան Արթուր Այրումյան Նարեկ Կարապետյան Տաթևիկ Ռոստոմյան	Հայաստանի տնտեսության վրա բացասաբար ազդող գործոնները, դրանք բնութագրող ցուցանիշների ընտրությունը և այդ ցուցանիշների համար առավելագույն կամ նվազագույն շեմերի սահմանման հնարավորությունները	Տպ.	Եր.: Տնտեսագետ, 2021.- («Ամբերդ» մատենաշար 42): DOI: 10.52174/978-9939-61-228-7	128 էջ

7.	Սոս Խաչիկյան Մանուկ Մովսիսյան Հայկ Քամայան Բագրատ Գեղամյան Անդրանիկ Սարգսյան Տաճատ Պապոյան	ՀՀ տարածքային կառավարման համակարգի հեռանկարները՝ տեխնոլոգիական գործիքակազմի ներդրմամբ	Տպ.	Եր.: Տնտեսագետ, 2021.- «Ամբեր» մատենաշար 43): DOI: 10.52174/978-9939-61-229-4	92 էջ
8.	Համազասպ Գալստյան Գագիկ Բարսեղյան Սասուն Սահակյան	Պետական մասնակցությամբ բժշկական կազմակերպությունների կառավարման արդյունավետության գնահատում	Տպ.	Եր.: Տնտեսագետ, 2021.- «Ամբեր» մատենաշար 44): DOI: 10.52174/978-9939-61-225-6	198 էջ
9.	«Ամբեր» հետազոտական կենտրոնի հետազոտական խումբ	Աշխատաշուկայի միտումները Հայաստանում	Էլ.	https://asue.am/upload/files/amberd/Labour%20Market.pdf	67 էջ
10.	Աննա Փախլյան Սուսաննա Արաջանյան Կարմեն Գրիգորյան Ծովակ Ոսկանյան Տիգրան Ղալայան	Էլեկտրոնային առևտուր. հնարավոր ռիսկեր, կորուստներ և զարգացման հնարավորություններ	Տպ.	Եր.: Տնտեսագետ, 2021.- «Ամբեր» մատենաշար 45): DOI: 10.52174/978-9939-61-233-1	180 էջ
11.	Գրիգոր Նազարյան Գագիկ Աղաջանյան Ալիսա Գևորգյան Նորա Այվազյան Անի Տերտերյան Անի Բարսեղյան	Աղբահանության ոլորտում արբի հավաքման, փոխադրման, պահպանման, հեռացման և/կամ օգտահանման ու վերանշակման գործընթացների ֆինանսատնտեսական վերլուծություն և ծախսարդյունավետության գնահատում	Տպ.	Եր.: Տնտեսագետ, 2021.- «Ամբեր» մատենաշար 46): DOI: 10.52174/978-9939-61-234-8	128 էջ
12.	Վարդան Սարգսյան Արմեն Ղազարյան Գայանե Հարությունյան Ֆրիդա Բահարյան Լուսինե Ստեփանյան Մելինե Այվազյան	Արիեստական բանականության կիրառական լուծումները ՀՀ ֆինանսական ենթակառուցվածքներում	Տպ.	Եր.: Տնտեսագետ, 2021.- «Ամբեր» մատենաշար 47): DOI: 10.52174/978-9939-61-235-5	166 էջ
13.	Ս. Ս. Ավետիսյան, Վ. Վ. Գրիգորյան, Գ. Ռ. Թովմասյան,	Հայաստանի Հանրապետության մարզերի զբոսաշրջային երթուղիները: Կոլեկտիվ մեծագրություն	Տպ.	Երևան: Հեղ. իրատ., 2021.	305 էջ

<p>Д.Н. Ахвердян, Р.Б. Тадевосян, И.В. Салтанова, Л.В. Новаш, О.В. Черных, Н.Н. Кулбатыров, Ж.Ж. Махамбеталиев, Ф.Е. Набиева, А.С. Амирбекова, Н.Е. Жаксыбаева, З.А. Еникеева, А.В. Данилыцев, М.К. Глазатова, Р.В. Крючков, О.В. Савельев, Д.А. Буканова, М.Д. Мадатов, В.С. Мядзел</p>	<p>Оценка интеграционных процессов ЕАЭС в сфере торговли: 2021</p>	<p>Үлгішарқ құбылғу</p>	<p>Национальный исследовательский университет «Высшая школа экономики», 2021 ISBN 978-5-7598-2274-5 (e-book)</p>	<p>251 бз</p>
<p>14.</p>	<p>Атоян В.К. Кузнецов А.В., Вилисов М.В., Вавилова В.И.</p>	<p>Атлас аналитических центров ЕАЭС: справочник, ИНИОН РАН</p>	<p>Соц.</p>	<p>Центр междисциплинарный исследований, Москва: ИНИОН РАН, 206 с.</p>

Վերլուծականների ցանկ

Հեղինակը	Անվանումը	Հղումը
Սուսաննա Աղաջանյան	Պատվաստանյութերը՝ որպես COVID-19 համավարակի «փրկօղակ»	DOI: 10.52174/2579-2989_2021_1_5
Սասուն Սահակյան	Մարքեթինգային քայլերի արձագանքը համավարակին	DOI: 10.52174/2579-2989_2021_1_11
Էրգար Աղաբեկյան	Դրամի փոխարժեքի վարքագիծը. Ապագայի սպասումներ, խունապ և սպեկուլյատիվ պահանջարկ	DOI: 10.52174/2579-2989_2021_1_21
Նարեկ Կարապետյան	Վստահե՞լ, արդյոք, «թվային ոսկուն»։ Բիթքոինը ներդրումային պորտֆելում	DOI: 10.52174/2579-2989_2021_1_28
Արմեն Ճուրղոյան	Հետպատերազմյան տնտեսությունում ներդրումային ինտրիգը	DOI: 10.52174/2579-2989_2021_1_34
Տաթևիկ Ռոստոմյան	Շուկայական տոկոսարդյուքների դերը պարտքի կայունացման համատեքստում. ինչպե՞ս կարող է վերահաստատվել պարտքի կայուն միջավայր	DOI: 10.52174/2579-2989_2021_1_39
Գագիկ Բաղդադյան	Շահութաբերությունը ՀՀ բանկային համակարգում. ինչպե՞ս պատերազմն ու համավարակն ազդեցին բանկային համակարգի արդյունքայնության վրա	DOI: 10.52174/2579-2989_2021_1_45
Արման Ասրյան	Բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրերը ՀՀ-ում. դիտարկումներ մասշտաբայնության և թիրախայնության համատեքստում	DOI: 10.52174/2579-2989_2021_1_68
Վարդան Աթոյան	Կարո՞ղ են արդյոք Չինաստանն ու ԱՄՆ-ը խուսափել «Ֆուկիդիի ծուղակից»	DOI: 10.52174/2579-2989_2021_1_90
Գագիկ Բաղդադյան	Տնտեսության ո՞ր ոլորտի կազմակերպություններն են ՀՀ-ում գործում առավել արդյունավետ	DOI: 10.52174/2579-2989_2021_2_5
Էրգար Աղաբեկյան	Կորպորատիվ պարտատոմսերի գրավչությունը պայմանավորող հիմնական գործոնները հայաստանի արժեթղթերի շուկայում	DOI: 10.52174/2579-2989_2021_2_15
